

# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ | 2025

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խորհրդի նախագահի ուղերձ  
Գլխավոր տնօրենի ուղերձ

## 01 ՈԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 1.1 Պատմական ակնարկ
- 1.2 Ընկերության ռազմավարություն
- 1.3 Տարվա բիզնես գործունեության արդյունքներ
  - Շարժական կապ
  - Ամրակցված կապ
- 1.4 Կայուն զարգացման ցուցանիշներ
  - Տարեկան բնապահպանական ցուցանիշների ամփոփ ներկայացում
  - Տարեկան սոցիալական ցուցանիշների ամփոփ ներկայացում
  - Վարվելակերպի կանոններ

## 02 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

- 2.1 Ընկերության վարչակազմակերպական կառուցվածք
- 2.2 Խորհրդի անդամներ
- 2.3 Ռիսկային գործոններ

## 03 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 3.1 Արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները
- 3.2 Շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում՝ շահութաբաժինների վճարման առաջարկությունները

## 04 ՀԱՎԵԼՎԱԾ

- 4.1 ԿԿ կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիր



## ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁ

### Ալեքսանդր Եսայան/ Խորհրդի նախագահ

Հարգելի՛ բաժնետերեր, գործընկերներ և թիմակիցներ,

2025 թվականը Team Telecom Armenia-ի համար շրջադարձային տարի էր, որը հաստատեց մեր համոզմունքն առ այն, որ ենթակառուցվածքներում հետևողական և երկարաժամկետ ներդրումներն ընկերության կայուն աճի հուսալի հիմքն են:

Խորհրդի անունից հպարտությամբ հայտնում եմ, որ 2025 թվականը դարձավ Team Telecom Armenia-ի տեխնոլոգիական զարգացման առանցքային փուլերից մեկը:

Մեր որդեգրած ռազմավարությունն ու տարվա ձեռքբերումները նոր հորիզոններ բացեցին ընկերության համար՝ վերափոխելով ավանդական հեռահաղորդակցության ճնաչափը բազմաշերտ, ապագային միտված թվային էկոհամակարգի:

Ընկերության մասշտաբային նախագծերի հաջող իրականացման կարևոր նախադրյալներից էին նաև միջազգային հեղինակավոր ներդրումների ներգրավումն ու ֆինանսական հավասարակշռված կառավարումը: Այսպես, 2024 թվականին 75 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով թողարկված Կայուն զարգացման պարտատոմսերը, առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում, ոչ միայն դարձան հայկական կապիտալի շուկայի նկատմամբ մեծ վստահության ազդակ, այլև մեր ռազմավարական առաջնահերթությունների իրականացման նախապայման:

Ընկերության Խորհուրդը հետևողականորեն վերահսկել է այս գործընթացի բոլոր փուլերը և վստահությամբ արձանագրում է, որ յուրաքանչյուր ներդրում ծառայել է իր նպատակին:

Կայուն զարգացման պարտատոմսերի թողարկմամբ նաև զգալի առաջընթաց ենք գրանցել մեր ստանձնած բնապահպանական թիրախներին հասնելու ուղղությամբ: Բազմապատկել ենք վերականգնվող էներգիայի մասնաբաժինը, նվազեցրել ենք արտանետումներն ու շարունակաբար ընդլայնում ենք էլեկտրական մեքենաների լիցքավորման ցանցը երկրի ողջ տարածքով:

Սա ևս մեկ անգամ հաստատում է, որ մեր խոստումները կյանքի են կոչվում իրական, տեսանելի և չափելի արդյունքների տեսքով:

Գիտակցելով ստանձնած հանձնառությունը՝ Խորհուրդը հավատարիմ է թափանցիկության, հաշվետվողականության և բաժնետերերի հետ կառուցողական երկխոսության բարձր չափանիշներին:

Խորին երախտագիտությունս Խորհրդի անդամներին կատարված պատասխանատու աշխատանքի համար, գործադիր մարմնին՝ նախագծերի հետևողական իրականացման համար, ինչպես նաև Team Telecom Armenia-ի բոլոր աշխատակիցներին, որոնց ամենօրյա նվիրվածությունն է ընկերության հաջողության գրավականը: Առանձնահատուկ շնորհակալություն մեր բաժնետերերին և ներդրողներին, մեր գործընկերներին և բաժանորդներին վստահության համար, որը ն՝ նշանակալի նվաճում է, և՛ շարունակական մեծ պատասխանատվություն:





## ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁ

**Հայկ Եսայան / Գլխավոր տնօրեն**

Հարգելի գործընկերներ,

2025-ը նշանավորվեց որպես վերազինման տարի՝ լայնածավալ ներդրումներով՝ ուղղված ցանցային ենթակառուցվածքների արդիականացմանը և ընդլայնմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանն ու թվային ծառայությունների զարգացմանը:

Այսպես, տարվա ընթացքում ամբողջությամբ վերազինեցինք բջջային ցանցը Տավուշի մարզում՝ ավելացնելով բազային կայանների քանակը և ընդլայնելով ծածկույթը նաև միջպետական ճանապարհներին, այդ թվում մարզի ամենաբանուկ և դժվարամատչելի հատվածում՝ Դիլիջանի թունելում:

2025 թվականը նշանավորվեց նաև 5G ցանցի գործարկմամբ՝ նախ երևանում, ապա՝ Գյումրիում և Վանաձորում, իսկ Ericsson ընկերության

հետ կնքված ռազմավարական համագործակցության հուշագիրը ևս մեկ կարևոր քայլ էր՝ ապահովելու, որ հեռահաղորդակցության նորագույն 5G տեխնոլոգիան հասանելի լինի մեր հարյուր հազարավոր բաժանորդներին:

Տարվա ընթացքում շարունակեցինք նոր սերնդի՝ 25G-PON օպտիկամանրաթելային NGN (Next Generation Network) ցանցի ընդլայնումը՝ հուսալի ինտերնետ կապ ապահովելով արդեն ավելի քան 415 000 տնային տնտեսության:

Թիմով շարունակում ենք մեծ ուշադրություն դարձնել կոնվերգենտ ծառայությունների զարգացմանը՝ միավորելով բջջային, ֆիքսված ինտերնետ և IPTV ծառայությունները մեկ միասնական փաթեթում: Միաժամանակ զարգացնում ենք թվային հարթակներն ու վճարային լուծումները՝ ձևավորելով ինտեգրված թվային էկոհամակարգ, որն օգտատերերին հնարավորություն կտա ստանալ անհրաժեշտ ծառայություններ, կատարել վճարումներ, միանալ նոր փաթեթների և օգտվել բազմատեսակ այլ թվային ծառայություններից:

Ընկերության կայուն զարգացման ուղղությամբ ևս արձանագրել ենք շոշափելի առաջընթաց՝ հաջողությամբ կյանքի կոչելով Կայուն զարգացման պարտատոմսերով ստանձնած մեր հանձնառությունները:

Հոգալով շրջակա միջավայրի մասին՝ դեռ 2023 թվականից նախաձեռնել ենք Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցի գործարկումը, որը շարունակեց իր սրընթաց զարգացումը նաև 2025-ին՝ ապահովելով ավելի քան 130 լիցքավորման կայան հանրապետության ողջ տարածքում:

Որպես կայուն և պատասխանատու ընկերություն՝ զգալիորեն նվազեցրել ենք մեր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա՝ բազմապատկելով վերականգնվող էներգիայի մասնաբաժինը, նվազեցնելով արտանետումներն ու կատարելագործելով ներդրված շրջանաձևության համակարգը:

Ֆինանսական տարին նույնպես բնութագրվել է հավասարակշռված աճով՝ պահպանելով ֆինանսական կայունությունն ու ներդրումների արդյունավետ օգտագործումը:

Մեր յուրաքանչյուր տեխնոլոգիական նախագիծ, սոցիալական, կրթական ու գիտական ոլորտներում իրականացրած յուրաքանչյուր ծրագիր պարզապես աջակցություն չէ. դա հավատ է, որ այսօր կատարած ներդրումը երկրի վաղվա հաջողության գրավականն է:

Մեր տեսլականն է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կարժևորվի մեր երկրի գլխավոր հարստությունը՝ ստեղծարար մարդկային կապիտալը՝ Հայաստանը վերափոխելով տարածաշրջանի առաջատար տեխնոլոգիական հանգույցի:




# 01 ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 1.1 Պատմական ակնարկ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հանդիսանում է Հայաստանի առաջին հեռահաղորդակցության համակարգի ավելի քան 100-ամյա պատմության ժառանգորդը:


Հայաստանի Հանրապետության հռչակումից ի վեր՝ 1995 թ.-ին ընկերությունը սկսել է գործել «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» անվան ներքո:

Ընկերությունը ՀՀ-ում մատուցում է 2G (GSM), 3G (UMTS) և 4G (LTE) ստանդարտի շարժական կապի, ամրակցված հեռախոսակապի, թվային հեռուստատեսության IPTV և OTT ծառայություններ, ինչպես նաև ապահովում է ամրակցված ինտերնետ հասանելիություն՝ FTTH, FTTB, VDSL և ADSL տեխնոլոգիաներով:



## 1.2 Ընկերության ռազմավարությունը

Մեր ռազմավարության հիմքը մեր առաքելությունն է՝ **մարդկանց շփումն ու աշխատանքը դարձնել ավելի հասանելի ու հարմար՝ ներդնելով թվային նորագույն տեխնոլոգիաներ**: Մենք ձգտում ենք **թիմի ստեղծագործ մտքի և գերժամանակակից տեխնոլոգիաների հնարավորությունների համադրության շնորհիվ դառնալ ոլորտի առաջատար**: Հետամուտ լինելով այս տեսլականին՝ մեր ռազմավարությունը կառուցվում է հետևյալ հենասյունների վրա.



## 01 Team Էկոհամակարգ

Մենք կառուցում ենք ժամանակակից, ճկուն և բարձր հուսալիությամբ ցանցային, սերվերային և ծրագրային ենթակառուցվածք՝ ապահովելով թվային ծառայությունների արագ ներդրում և որակյալ մատուցում: Այդ նպատակով շարունակաբար զարգացնում և արդիականացնում ենք մեր կոմունիկացիոն ցանցերն ու տեղեկատվական տեխնոլոգիական պլատֆորմները՝ ձևավորելով մրցունակ և նորարարական տեխնոլոգիական միջավայր:

Ֆիքսված և շարժական ցանցերի ընդլայնումն ու արդիականացումը մնում են մեր ռազմավարական առաջնահերթություններից: Դրա արդյունքում թե՛ անհատ, թե՛ բիզնես հաճախորդներն օգտվում են ավելի որակյալ ծառայություններից՝ նպաստելով թվային տնտեսության և ձեռներեցության զարգացմանը երկրի տարբեր բոլոր մարզերում մարզերում:

Միաժամանակ, միջազգային կապուղիների ենթակառուցվածքի զարգացումը նպաստում է մեր դիրքերի ամրապնդմանը տեղական և տարածաշրջանային շուկաներում: Գործընկեր օպերատորներին մենք առաջարկում ենք տվյալների փոխանցման բարձրորակ և կայուն ծառայություններ:

Տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը մեր ռազմավարության կարևոր բաղադրիչներից է: 2025 թվականին շարունակվել է գերարագ ցանցի ընդլայնումը՝ ընդգրկելով ավելի քան 415,000 տնային տնտեսություն:

2025 թվականը հայտարարել էինք բջջային ցանցի վերազինման տարի՝ շուրջ 10 միլիարդ դրամի ներդրումներով: Արդյունքում ամբողջությամբ արդիականացվել է Տավուշի մարզի բջջային ցանցը: Բարելավվել է կապի որակը, ընդլայնվել է ծածկույթը, ինչպես նաև աճել են ինտերնետի արագությունն ու ցանցի թողունակությունը: Ծառայությունները հասանելի են դարձել նաև նախկինում սահմանափակումներ ունեցող տարածքներում, ներառյալ Դիլիջանի թունելը:

Բջջային ցանցի բարելավման աշխատանքները շարունակվելու են նաև առաջիկա տարիներին Երևանում, մարզերում և միջպետական ճանապարհներին՝ ապահովելով կապի հուսալիություն նաև երթևեկության ընթացքում:

4G ցանցի զարգացմանը զուգահեռ՝ ընկերությունը շարունակում է 5G ցանցի ներդրման աշխատանքները: 5G ցանցն ցանցն արդեն հասանելի է հարյուր հազարավոր օգտատերերի՝ գործարկվել է Երևանում, Գյումրիում և Վանաձորում՝ արագ և հուսալի կապ ապահովելով հարյուր հազարավոր օգտատերերի համար:

Նոր սերնդի ցանցի կառուցումն իրականացվում է համաշխարհային տեխնոլոգիական առաջատար Ericsson ընկերության սարքավորումների և լուծումների կիրառմամբ: Այս գործընթացը նաև հնարավորություն է տալիս վեց իրականացնելու ռազմավարական հաջորդ քայլը՝ 2G ցանցի փուլային փոխարինումը՝ ապահովելով ավելի անվտանգ և ժամանակակից ծառայություններ:



## Team հաճախորդ

Տելեկոմ Արմենիա ԲԲԸ-ն շարունակաբար իրականացնում է նախաձեռնություններ՝ ուղղված հաճախորդների փորձառության բարելավմանը: Այս նպատակով ընկերությունը ներդնում է սպասարկման նորարար համակարգեր, զարգացնում է թվային գործիքները և ապահովում բարձրորակ ու արդյունավետ հաղորդակցություն շփման բոլոր հարթակներում:

2025 թվականին շարունակվել է ամրակցված և շարժական կապի ծառայությունների որակի բարելավումն ուն հասանելիության զարգացումը ընդլայնումը: Դրան զուգահեռ ընդլայնվել է բաժանորդային բազան՝ պայմանավորված կոնվերգենտ փաթեթների առաջարկով, որոնք համադրում են շարժական կապը, լայնաշերտ ինտերնետը, IPTV թվային հեռուստատեսությունն ու ծայնային ծառայությունները՝ ապահովելով միասնական և հարմարավետ օգտագործման փորձառություն:

Հաճախորդների սպասարկման հասանելիության բարձրացման նպատակով շարունակվել է վաճառքի և սպասարկման կենտրոնների ցանցի ընդլայնումը: 2025 թվականի դրությամբ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի մասնաճյուղերի թիվը հասել է 80-ի՝ ընդգրկելով Հայաստանի տարբեր մարզեր և ապահովելով ծառայությունների լայն հասանելիություն:

Միաժամանակ, ընկերությունը շարունակել է ներդնել ինքնասպասարկման գործիքների ներդրումը՝ նպատակ ունենալով պարզեցնել և արագացնել հաճախորդների կողմից ծառայությունների կառավարումը: Այս մոտեցումը թույլ է տալիս համադրել թվային հարթակների հարմարավետությունը և սպասարկման բարձր որակը:

Ընդհանուր առմամբ, 2025 թվականին իրականացված նախաձեռնությունները նպաստել են հաճախորդների փորձառության բարելավմանը, սպասարկման հասանելիության ընդլայնմանը և շուկայում բրենդի դիրքերի ամրապնդմանը:



## Team ծառայություններ

Մենք շարունակաբար զարգացնում ենք մեր թվային հարթակները՝ նպատակ ունենալով ձևավորել ինտեգրված ծառայությունների էկոհամակարգ, որն ապահովում է միասնական, հասանելի և որակյալ փորձառություն օգտատերերին: Այս ուղղությամբ առումով առանցքային դեր ունեն My Team, Team Energy և TeamTV թվային հավելվածները:

### My Team

My Team բջջային հավելվածը հանդիսանում է հաճախորդների ինքնասպասարկման հիմնական հարթակը՝ ապահովելով ծառայությունների հասանելիություն ցանկացած պահի և ցանկացած վայրից:

Հավելվածի միջոցով բաժանորդները կարող են կառավարել իրենց հաշիվները և ծառայությունները՝ ստուգել հաշվեկշիռը կշռի, և փաթեթների մնացորդները, փոփոխել սակագնային փաթեթները, ակտիվացնել ծառայություններ և ավտոմատ վճարումներ, ինչպես նաև օգտվել առցանց աջակցության գործիքներից:

Հավելվածը միաժամանակ ծառայում է որպես հաղորդակցման ալիք ուղի՝ ապահովելով օգտատերերի իրազեկումը ընկերության նոր առաջարկների և ակցիաների վերաբերյալ:

### Team Energy

Մեր ռազմավարական ուղղություններից է հասույթի աղբյուրների դիվերսիֆիկացիան՝ նորարարական և ժամանակակից լուծումներով հագեցած ծառայությունների ներդրման միջոցով:

Այս նպատակով, առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում, մեկնարկեցինք Team Energy նախագիծը, որը միավորում է հեռահաղորդակցության, էներգետիկայի և էկոլոգիայի ոլորտները:

Նախագիծը նպատակ ունի խթանել էլեկտրական մեքենաների կիրառումը Հայաստանում՝ նպաստելով շրջակա միջավայրի պահպանությանը և տրանսպորտային ծախսերի նվազեցմանը:

Team Energy-ի լիցքավորման կայանների ցանցը հասանելի է հանրապետության ամբողջ տարածքում՝ այսօր արդեն 130 գործարկված լիցքավորման կայաններով: Բջջային հավելվածի միջոցով օգտատերերը կարող են գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում և վճարել բանկային քարտի միջոցով, իսկ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի բաժանորդ լինելու դեպքում՝ նաև Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից:

### TeamTV

TeamTV հարթակը ապահովում է ժամանակակից թվային հեռուստատեսության ծառայություններ՝ հասանելի տարբեր սարքերով:

TeamTV-ի միջոցով օգտատերերը ստանում են հասանելիություն բազմաժանր բովանդակության՝ ֆիլմերի, սերիալների, երաժշտական և սպորտային ծրագրերի: Հարթակը ներառում է հնարավորություններ, ինչպիսիք են ալիքների դասակարգումը ստ ժանրերի, բովանդակության որոնումը, ինչպես նաև անհատական նախընտրությունների հիման վրա դիտման ցանկերի ձևավորումը:

## 04 Team Կառավարում

Որպես հեռահաղորդակցության ոլորտում առաջատար ընկերություն՝ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն շարունակաբար զարգացնում է իր կառավարման համակարգերը՝ կայուն զարգացում և երկարաժամկետ աճ ապահովելու նպատակով համար: Այս Սրա համար նպատակով ընկերությունը հետևողականորեն ներգրավում է անհրաժեշտ ներդրումային ռեսուրսներ և բարելավում գործառնական արդյունավետությունը բոլոր մակարդակներում:

Ֆինանսական կայունության ապահովման շրջանակում ընկերությունը վարում է ծախսերի կառավարման ողջամիտ և պատասխանատու քաղաքականություն՝ միաժամանակ շարունակաբար բարձրացնելով ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը: Հատուկ ուշադրություն է դարձվում ենթակառուցվածքների ռացիոնալ օգտագործմանը և մատակարարման շղթաների արդյունավետ կառավարմանը:

Ընկերությունը գործում է միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան՝ ներդնելով կառավարման համակարգեր, որոնք ապահովում են որակի կառավարումը, տեղեկատվական անվտանգությունը և շրջակա միջավայրի պահպանությունը:

Ընկերությունում արդեն ներդրված են ISO/IEC 27001:2013 տեղեկատվական անվտանգության կառավարման և ISO 9001:2015 որակի կառավարման համակարգերը, իսկ 2025 թվականին մեկնարկել է ISO 14001 բնապահպանական կառավարման համակարգի ներդրման գործընթացը՝ նպատակ ունենալով բարձրացնել ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը և նվազեցնել ազդեցությունը շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

Շրջակա միջավայրի պահպանությունը հանդիսանում է «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի կայուն զարգացման ռազմավարության կարևոր նպատակներից մեկն է: Ընկերությունը նպատակ է դրել մինչև 2029 թվականը նվազեցնել մթնոլորտային արտանետումները 40%-ով:

## 05 Team մարդիկ

Մեր գործունեության հիմքում Team-ի երկու առանցքային արժեքներն են՝ առաջադեմ և թիմային: Բարձր որակավորում ունեցող մեր մասնագետներն իրենց ամենօրյա գործունեությունն իրականացնում են մեծ պատասխանատվությամբ՝ ապահովելով բարձրակարգ ծառայություններ և հաճախորդի լավագույն փորձառություն բոլոր հարթակներում:

2025 թվականին ընկերությունը շարունակել է զարգացնել թիմային մշակույթը և խրախուսել բարձր արդյունքներ ապահովող աշխատակիցներին՝ կարևորելով յուրաքանչյուրի անհատական ներդրումը: Այս մոտեցման արդյունավետությունը արտահայտվում է աշխատակիցների գոհունակության բարձր մակարդակով. eNPS (Employee Net Promoter Score) ցուցանիշը կազմել է 50.5%: Այս արդյունքը հնարավոր է դարձել թիմային աշխատանքի և շարունակաբար բարելավվող ներքին գործընթացների շնորհիվ, որոնց զարգացումը շարունակում է մնալ մեր առաջնահերթություններից:

Միջբաժնային համագործակցությունն ու թիմային ոգին մեր կորպորատիվ մշակույթի անբաժան մասն են: Մենք գործում ենք միասնական նպատակների և արժեքների շուրջ՝ ձևավորելով պատասխանատվության և համագործակցության միջավայր:

2025 թվականի կարևոր նախաձեռնություններից էր վաճառքի բարձր արդյունքներ գրանցած շուրջ 50 աշխատակիցների խրախուսումը՝ եվրոպական շրջազայության ուղեգրերով, ինչը նպաստեց ներգրավվածության և մոտիվացիայի բարձրացմանը:

Միաժամանակ, Team ընկերությունների խումբը «Ուղղությունը՝ Թիմ» կարգախոսով ներկայացավ Career City Fest-ին՝ ամրապնդելով իր դիրքը որպես մրցունակ և գրավիչ գործատու՝ բաց տարբեր ոլորտների մասնագետների համար: Ընկերությունում կարևորում ենք աշխատակիցների շարունակական կրթությունն ու մասնագիտական զարգացումը՝ ներդրումներ կատարելով վերապատրաստման և անձնական զարգացման ծրագրերում: Մեր նպատակն է ձևավորել անհատի աճին և առաջխաղացմանը նպաստող միջավայր, որտեղ յուրաքանչյուր աշխատակից կունենա զարգանալու, ինքնադրսևորվելու և արժեք ստեղծելու համար բոլոր անհրաժեշտ գործիքները գործիքներն ու հնարավորությունները:

Ընկերության երկարաժամկետ կայունության ապահովման նպատակով մենք նաև ձեռնամուխ ենք լինում կարևորագույն պաշտոններին հավակնող փոխհաջորդների նախապատրաստմանը:

### 1.3 Տարվա բիզնես գործունեության արդյունքները

#### ՇԱՐԺԱԿԱՆ ԿԱՊ

Ընկերության շարժական կապի բաժանորդների թիվը 2025 թ. կազմել է 1,047,732: Մասնավորապես, զգալիորեն աճել է հեռախոսի միջոցով շարժական ինտերնետ օգտագործող բաժանորդների թիվը՝ 808,885: 2024թ.-ի համեմատ արձանագրվել է աճ 21%-ով:

2025 թ. տվյալների համաձայն ընկերությանը բաժին է ընկնում 22 շարժական կապի շուկայի բաժանորդների 25%-ը:

2025թ. շարժական կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտները 2024 թ. համեմատ աճել են 6%-ով և կազմել 20.9 մլրդ դրամ: «Տելեկոմ Արմենիա»-ին 2025 թ. բաժին է ընկել 22 շարժական կապի շուկայի եկամուտների 20.9%, գրանցելով տարեկան աճ 0.1 տոկոսային կետով:

Ընկերության 4G ցանցի բաժանորդների քանակը նույնպես հետևողականորեն աճում է՝ Տեխնոլոգիական առանձնահատկություններով և շուկայի զարգացման միտումներով պայմանավորված՝ 3G ցանցի բաժանորդների թվի աճը մնում է չափավոր, մինչդեռ 2G ցանցի բաժանորդների թիվը տարեցտարի նվազում է՝ պայմանավորված նոր սերնդի տեխնոլոգիաների նկատմամբ աճող պահանջարկով և դրանց ավելի լայն կիրառմամբ:

Ստորև աղյուսակում ներկայացված է տարբեր տարիներին տարեվերջի դրությամբ Ընկերության շարժական կապի բաժանորդների քանակը.

	2020	2021	2022	2023	2024	2025
շարժական կապի բաժանորդներ	904 689	915 534	958 293	1 044 939	1 051 679	1 047 732
մասնաբաժինը բնակչության թվաքանակից	31.0 %	31.0 %	32.0 %	35.1 %	35.1 %	34.0 %
կանխավճարային բաժանորդներ	784 133	777 573	787 261	856 918	830 175	781 634
հետվճարային բաժանորդներ	120 556	137 961	171 032	188 021	222 854	266 098

Շարժական ինտերնետից (տվյալների հաղորդման ծառայություններից) օգտվող բաժանորդների քանակը վերջին տարիներին կայուն աճել է՝ հասնելով ընդհանուր բաժանորդների թվի 86.3%-ին: Ստորև աղյուսակով ներկայացված է շարժական ինտերնետի բաժանորդների քանակի դինամիկան՝ ըստ տարիների.

	2020	2021	2022	2023	2024	2025
Շարժական ինտերնետ բաժանորդներ	557 966	618 206	671 960	743 296	783 818	904 214
մասնաբաժինը ընդհանուր բաժանորդներում	61.7 %	76.5 %	70.1 %	71.1 %	74.5 %	86.3 %
Բացառությամբ հեռախոսասարքի միջոցով օգտվողների	55 531	59 284	79 314	82 565	114 956	95 329
հեռախոսասարքի միջոցով օգտվողների	502 435	558 922	592 646	660 731	668 862	808 885

Ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, 2025 թ. ևս շարունակեց տրամադրել իր բաժանորդներին որակյալ կապ առաջարկելով հարմարավետ փաթեթներ և ծառայություններ: Հիմնական առաջարկներն ուղղված էին համակցված փաթեթների օգտագործողների քանակի ներթափանցելիության աճին և առաջխաղացմանը, ինչպես նաև շարժական ինտերնետի որակյալ ծառայությունների մատուցմանը, ներառյալ ռոումինգ ծառայությունները:

Լինելով առաջինը Հայաստանի հեռահաղորդակցության ոլորտում առաջինը լինելով՝, Ընկերությունը 2023 թվականին գործարկեց նորարական Team Energy Նախագիծը, որտեղ հատվում են հեռահաղորդակցությունը, էներգետիկան և էկոլոգիան: Այս նախագիծը հնարավորություն է տալիս խթանել և հեշտացնել էլեկտրական մեքենաների օգտագործումը Հայաստանում՝ զգալիորեն կրճատելով օդի աղտոտվածությունը և տրանսպորտային ծախսերը: Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցն արդեն հասանելի է 22 ողջ տարածքում: Իսկ Team Energy հավելվածի միջոցով հնարավոր է գտնել մոտակա լիցքավորման կետերը, կատարել լիցքավորում և վճարել բանկային քարտով, իսկ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ բաժանորդ լինելու դեպքում՝ նաև Team-ի հեռախոսահամարի հաշվեկշռից: 2025 թվականին շարունակվեց Team Energy էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների ցանցի ընդլայնումը և բարելավումը:

# ԱՄՐԱԿՑՎԱԾ ԿԱՊ



2025 թվականին «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի ամրակցված կապի ծառայությունների մատուցումից և սարքավորումների իրացումից ստացված եկամուտը կազմել է 15.4 մլրդ. դրամ՝ արձանագրելով 1% աճ 2024 թ. համեմատ:

Ամրակցված ինտերնետի բաժանորդների թիվը 2025 թ. դրությամբ 93.3 հազար է:

2025 թ. արդյունքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ին բաժին է ընկնում ամրակցված ինտերնետի շուկայի բաժանորդների 30.6%-ը, ինչպես նաև ամրակցված ինտերնետի շուկայի ծառայություններից ստացված եկամուտների 23.5%-ը:

Ընկերությունը շարունակում է նոր, գերաբազ FTTH ցանցի ընդլայնումը ՀՀ ողջ տարածքում: FTTH ցանցի հասանելիությամբ ապահովված տնային տնտեսությունների քանակը 2025 թ. վերջի դրությամբ կազմել է 415 հազար:

## Ամրակցված կապի բաժանորդներ

2025 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ամրակցված կապի բաժանորդների քանակը կազմել է 296,578:

2025 թ. շարունակվել է ծայնային ծառայությունների օգտագործման նվազումը, ինչը պայմանավորված է բաժանորդների՝ ամրակցված կապից դեպի շարժական կապ միգրացիայով, ինչպես նաև OTT ծայնային պլատֆորմների ընդլայնվող հասանելիությամբ: Ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների 84%-ը բաժին է ընկնում անհատներին, իսկ մնացածը՝ Ընկերություններին և պետական կառույցներին:

Ստորև աղյուսակում ներկայացված է ամրակցված ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակի բացվածքը՝ ըստ տեխնոլոգիաների.<sup>1</sup>

	2020	2021	2022	2023	2024	2025
<b>Ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդներ, որից</b>	<b>105 810</b>	<b>99 515</b>	<b>92 907</b>	<b>94 772</b>	<b>97 827</b>	<b>93 260</b>
ADSL տեխնոլոգիայով	71 065	53 056	39 184	31 099	23 922	16 077
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	67 %	53 %	42 %	33 %	24 %	17 %
VDSL տեխնոլոգիայով	14 039	19 955	22 748	19 757	18 134	16 543
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	13 %	20 %	24 %	21 %	19 %	18 %
FTTB տեխնոլոգիայով	19 326	24 353	23 767	23 543	21 722	15 214
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	18 %	24 %	26 %	25 %	22 %	16 %
FTTH տեխնոլոգիայով	-	1 251	6 731	20 073	33 879	45 426
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	-	1 %	7 %	21 %	35 %	49 %
այլ տեխնոլոգիաներով	1 380	900	477	300	170	-
մասնաբաժինը ընդհանուր ինտերնետ բաժանորդներում	1 %	1 %	1 %	0 %	0 %	0 %

Դիտարկված պատմական ժամանակաշրջանում ամրակցված ինտերնետի բաժանորդների թվում ADSL հին տեխնոլոգիայով բաժանորդների քանակը նվազել է տարեկան 26% միջին տեմպով (CAGR): Նույն ժամանակաշրջանում FTTB տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների քանակը նվազել է համապատասխանաբար 5% տարեկան միջին տեմպով (CAGR): VDSL բաժանորդների քանակը նույն ժամանակահատվածում աճել է 3% տարեկան միջին տեմպով (CAGR):

ADSL տեխնոլոգիայով բաժանորդների մասնաբաժինն ամրակցված ինտերնետի բաժանորդների քանակում 2025 թ. տարեվերջի դրությամբ կազմել է 17%, որը 2024 թ. ցուցանիշից պակաս է 7 տոկոսային կետով: Փոխարենը աճում է FTTH տեխնոլոգիայով ինտերնետի բաժանորդների մասնաբաժինը՝ 2025 թ. վերջին հասնելով 49%-ի: Ընկերությունն իր բաժանորդներին առաջարկում է նաև մի շարք թվային ծառայություններ:

Ընկերության բաժանորդները հնարավորություն ունեն կոմունալ և այլ ծառայությունների դիմաց վճարումներ կատարել «Թիմ Փեյ» ՓԲԸ վճարահաշվարկային ընկերության գրասենյակներում, որոնք գործում են Ընկերության մասնաճյուղերում:

<sup>1</sup> Սղբյուր՝ Ընկերության տվյալներ

Շարժական կապի բաժանորդները հնարավորություն ունեն Team Energy հավելվածի միջոցով իրենց բջջային հեռախոսահամարի հաշվեկշից լիցքավորել էլեկտրական մեքենաները 130-ից ավել լիցքավորման կայաններում:

Ընկերության բաժանորդների համար գործում է նաև «Team Բոնուս» խրախուսական ծրագիրը, որը հնարավորություն է տալիս կատարված ծախսերի դիմաց կուտակել բոնուսային միավորներ և դրանք փոխանակել մի շարք ծառայությունների հետ (բջջային ինտերնետի փաթեթներ, ըրպեներ և գործընկերների հետ համատեղ ստեղծված հատուկ առաջարկներ):

## 1.4 Կայուն զարգացման ցուցանիշներ

### Բնապահպանական և սոցիալական կառավարում

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի՝ 2024 թվականից որդեգրած ռազմավարական նպատակներից մեկը կայուն զարգացումն է՝ հիմնված բնապահպանական և սոցիալական կառավարման սկզբունքների վրա:

Ընկերության կայուն զարգացման վերաբերյալ նշյալ հանձնառությունն արտացոլված է նաև Ընկերության պաշտոնական կայքէջում և հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.telecomarmenia.am/hy/sustainable-development/>՝ Համաձայն Ընկերության Կայուն Զարգացման Պարտատոմսերի Հայեցակարգի «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն ընտրել է երկու հիմնական կատարողականի ցուցանիշ (ՀԿՑ) և համապատասխան հավակնոտ ԿԶԿԹՑ-ներ (Կայուն Զագացման Կատարողականի Թիրախային Ցուցանիշներ), որոնք երկուսն էլ առանցքային, բնորոշ և էական նշանակություն ունեն իր գործունեության համար:

ՀԿՑ 1-ի սահմանումը հետևյալն է՝ **Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումներ (տCO2 համ.) բացարձակ թվով**<sup>3</sup>

ՀԿՑ 1բ-ի սահմանումը հետևյալն է՝ **Շրջանակ 3 ՋԳ արտանետումներ (տCO2 համ.) բացարձակ թվով**, որոնց թվում՝

- սկզբնական փուլի գործողությունները, ներառյալ ՋԳ անուղղակի արտանետումները՝ կապված ձեռքբերված ապրանքների և ծառայությունների հետ (**Կատեգորիա 1**),
- վառելիքի և էլեկտրաէներգիայի արտադրության և փոխադրման ընթացքում առաջացող արտանետումների հետ (**Կատեգորիա 3**)
- առաջացած թափոնները՝ հաշվի առնելով տվյալ գործունեության ոլորտում թափոնների կառավարման ազդեցությունը (**Կատեգորիա 5**).
- վաճառվող ապրանքների հետ կապված ՋԳ անուղղակի արտանետումները՝ հաշվի առնելով սպառողներին ապրանք վաճառելուց առաջացած արտանետումները (**Կատեգորիա 11**).

Ըստ Կայուն զարգացման պարտատոմսերի հայեցակարգի՝ Ընկերությունը սահմանել է արտանետումների ծավալների կրճատման միջանկյալ նպատակ՝ մինչև 2027թ. հոկտեմբերի 1-ը 20%-ով նվազեցնել 1-ին և 2-րդ Շրջանակի արտանետումների ընդհանուր ծավալը՝ էլակետային տարվա՝ 2023 թվականի համեմատ, և 3-րդ Շրջանակի արտանետումները՝ մինչև 2027թ. հոկտեմբերի 1-ը:


Շրջանակ 1+2 ՋԳ արտանետումներ	Շրջանակ 3 ՋԳ արտանետումներ	սեփականարևային արտադրանքի մասնաբաժին	ավտոպարկի էլեկտրաֆիկացում
23% նվազեցում էլակետային տվյալների նկատմամբ (2023)	22.5% նվազեցում էլակետային տվյալների նկատմամբ (2023)	4.5% ընդհանուր էներգատարման մեջ	28.9% մարդատար մեքենաների կազմում
Թիրախի գերակատարում	Թիրախի գերակատարում	Թիրախի լիարժեք կատարում	Թիրախի գերակատարում

### ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՇՐՋԱՆԱԿ 1+2 ՋԳ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ (տCO<sub>2</sub>համ.)

2025 թ. Շրջանակ 1 և 2 ՋԳ արտանետումների նվազեցումը կազմել է 23%՝ 2023 թ. էլակետային տարվա նկատմամբ, և ընթանում է ըստ պլանավորված ճանապարհային քարտեզի՝ 2029 թ. նոյեմբեր 1-ի դրությամբ 40% նվազեցում ապահովելու համար:

Միջանկյալ թիրախ է սահմանված 2027 թ. հոկտեմբերի 1-ի դրությամբ 20% նվազեցումը, ընդ որում 2025 թ. ՋԳ արտանետումների հաշվարկների տվյալով, այս թիրախը համարվում է գերակատարված:<sup>4</sup>



Այդուհանդերձ, հաշվի առնելով Ընկերության հետագա ընդլայնումն ու ենթակառուցվածքների զարգացումը՝ կանխատեսվում է էլեկտրաէներգիայի սպառման ծավալների ավելացում: Ուստի Ընկերությունը, տեխնիկական և ֆինանսական վերլուծությունների, ինչպես նաև Ընկերության ռազմավարությամբ սահմանված թիրախների հիման վրա կշարունակի կատարել ՋԳ արտանետումների նվազեցմանն ուղղված անհրաժեշտ գործողություններ՝ համաձայն գործող ներքին ընթացակարգերի:

<sup>2</sup> [https://www.telecomarmenia.am/file\\_manager/Sustainability-linked%20bond%20framework%20\(final%202022\)/Reviewed\\_SLB\\_Framework\\_ARM\\_tr.pdf](https://www.telecomarmenia.am/file_manager/Sustainability-linked%20bond%20framework%20(final%202022)/Reviewed_SLB_Framework_ARM_tr.pdf)


<sup>3</sup> Բացառություններ.  
 - հաշվարկներում չեն ներառվել չորի սպառման հետ կապված արտանետումները:  
 - «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն չունի արտանետում առաջացնող որևէ համատեղ ձեռնարկություն և/կամ գրանցված օֆշորային ընկերություն, այդ իսկ պատճառով հաշվետվության և հաշվարկների մեջ որևէ նման ցուցանիշ ներառված չէ:

<sup>4</sup> Տվյալը նշվել է ըստ ՋԳ արտանետումների հաշվարկի՝ երրորդ, անկայն ընկերության կողմից վերիֆիկացման հաշվետվության եզրակացության (անկայն ստուգում)՝ համաձայն Ընկերության Կայուն Զարգացման Պարտատոմսերի Հայեցակարգի պահանջի:


## ՇՐՋԱՆԱԿ 1 – ՈՒՂՂԱԿԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

2023 թվականից սկսած Ընկերությունն իրականացնում է Շրջանակ 1 ՋԳ արտանետումների նվազեցման հետևողական քաղաքականություն, որի շրջանակներում 2024-2025 թթ. ընթացքում իրականացվել է պահուստային էներգահամակարգերի և գեներատորների փոխարին արդիականացում, էներգաարդյունավետ սարքավորումների ներդրում, օդորակման համակարգերի փոխարինում ցածր արտանետումներ ունեցող սառնագեղատ պարունակող սարքերով, ինչպես նաև հանածո վառելիքի սպառման նվազեցում՝ երթուղիների կառավարման մեխանիզմների միջոցով ու ավտոպարկի աստիճանական թարմացմամբ՝ ներառյալ էլեկտրական մեքենաների քանակական աճն<sup>5</sup> ու համապատասխան լիցքավորման ենթակառուցվածքների զարգացումը:


Ընկերությունը շարունակաբար նվազեցնում է շարժական աղբյուրներից արտանետումները՝ ավտոպարկում ավելացնելով էլեկտրական մեքենաների մասնաբաժինը, իրականացնելով երթուղիների մանրամասն վերլուծություն և կառավարում, ինչը նպաստում է հանածո վառելիքի ՋԳ արտանետումների էական նվազմանը: Ստորև գծապատկերներում ներկայացված են Ընկերության Շրջանակ 1 ՋԳ արտանետումների ցուցանիշները՝ ըստ աղբյուրների



(Գծ. 1) Ստացիոնար աղբյուրների արտանետումների համեմատական ըստ տարիների



(Գծ. 2) Շարժական աղբյուրների արտանետումների համեմատական ըստ տարիների



(Գծ. 3) Ցրվող աղբյուրների արտանետումների համեմատական ըստ տարիների

<sup>5</sup> Նաշվարկված է մարդատար մեքենաների քանակով

## ՇՐՋԱՆԱԿ 1 ԶԳ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐԻ ԲՈՒՈՐ ԱՂՔՅՈՐՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ 2023-2025 ԹԹ.


Կատեգորիա	Աղբյուր	2023 (տ CO2համ.)	2025 (տ CO2համ.)	փոփոխություն
Ստացիոնար աղբյուրներ	դիզել	167.18	143.0	↓14.5 %
Ստացիոնար աղբյուրներ	բենզին	37.78	39.2	↑3.8 %
Ստացիոնար աղբյուրներ	ընդհանուր	204.96	182.2	↓11.1 %
Շարժական աղբյուրներ	դիզել	210.57	294.3	↑39.8 %
Շարժական աղբյուրներ	բենզին	510.76	688.3	↑34.7 %
Շարժական աղբյուրներ	սեղմված գազ	525.76	562.0	↑6.9 %
Ցրվող աղբյուրներ	Սառնազենտ 1 <sup>6</sup>	724.00	503.9	↓30 %
Ցրվող աղբյուրներ	Սառնազենտ 2	271.44	255.8	↓5.8 %
Ցրվող աղբյուրներ	Սառնազենտ 3	177.40	21.1	↓88 %
Ցրվող աղբյուրներ	Սառնազենտ 4	-	0.7	Նոր կիրառվող տեսակ 2025
Սառնազենտ	Ընդհանուր	1172.84	781.5	↓33.3 %

## ՇՐՋԱՆԱԿ 2 – ԱՆՈՂՂԱԿԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Բնական գազի սպառումն աճել է 12.1%-ով՝ ելակետային տարվա նկատմամբ, ինչը պայմանավորված է ԸՆԿԵՐՈՒՅԱՆ աճով և աշխատակիցների քանակի ավելացմամբ:

Վերականգնվող էներգիայի աղբյուրների ավելացման շնորհիվ ցանցային (grid) էլեկտրաէներգիայի սպառումը նվազել է շուրջ 30%-ով, իսկ միայն 2025 թ. սեփական արտադրության արևային (էներգիայի) արտադրանքը ԸՆԿԵՐՈՒՅԱՆ ընդհանուր էներգասպառման մեջ կազմել է 4,5%՝ 2023 թվականի՝ 2,99% -ի համեմատ:


Ստորև գծապատկերում ներկայացված է սեփական արևային (էներգիայի) արտադրանքի աճը՝ տոկոսային փոփոխությամբ ըստ տարիների՝



(Գծ. 4) Սեփական արևային էներգիայի արտադրանքի %-ային աճը 2023 -2025 թթ

Միաժամանակ, 2024-2025 թթ. ընթացքում ԸՆԿԵՐՈՒՅԱՆ ղիվերսիֆիկացրել է էլեկտրաէներգիայի մատակարարների ցանկը՝ նախապատվությունը տալով վերականգնվող էներգիա արտադրող և վաճառող մատակարարներին: Այս փոփոխությունների արդյունքում 2023 թ.-ի նկատմամբ 2025 թ.-ին ՇՐՋԱՆԱԿ 2 ԶԳ արտանետումները նվազել են 25,4%-ով:

ՇՐՋԱՆԱԿ 2 ԶԳ արտանետումների աղբյուրների համեմատական



(Գծ. 5) ՇՐՋԱՆԱԿ 2 ԶԳ արտանետումների բոլոր աղբյուրների համեմատական

2025թ. ՇՐՋԱՆԱԿ 1 և 2 ԶԳ արտանետումների փաստացի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում՝

Ցուցանիշ	2023 ելակետային	2025 փաստացի
ՇՐՋԱՆԱԿ 1+2 ԶԳ արտանետումներ (տCO2համ.)	19.559	15.145
%- ային փոփոխություն ելակետային տարվա համեմատ	-	↓23 %

<sup>6</sup> Սառնազենտների տեսակները ցայախանջ հասանելի են դիտարկման համար

### ՇՐՋԱՆԱԿ 3 ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՂՔԱՅԻ ԱՐՏԱՆԵՏՈՒՄՆԵՐ

Շրջանակ 3 ՋԳ արտանետումները 2023 թ. համեմատ նվազել են 22.5%-ով, ինչը պայմանավորված է Կատեգորիա 1-ում 56.7% նվազմամբ և Կատեգորիա 5-ում՝ 97% նվազմամբ (120 -> 3.55 տCO<sub>2</sub>համ):

Այս արդյունքը պայմանավորված է Ընկերության ներսում շրջանաձևության (շրջանաձև տնտեսության) ակտիվացման, վերանշակման և կրկնօգտագործման, ինչպես նաև մատակարար ընկերությունների թիրախավորման, ընտրության, ՀԿՑ-ների սահմանման և մոտիվացման այլ գործոններով (պայմանագրային փոփոխություններ):

Ստորև ներկայացված են տվյալներ Ընկերության շրջանաձևության (շրջանաձև տնտեսության) համակարգում ամենամեծ արդյունքներ գրանցած փոփոխությունների վերաբերյալ՝

Էլթափոխներ → **16 000** → Վերանորոգված և կրկնօգտագործված էլ. սարքեր (2025 թ.)

Վերանշակված թուղթ → **8.6 տոննա** → (ներառյալ գրասենյակային թուղթ և ստվարաթուղթ 2025 թ.)


Պղինձ → **0.190.1 տոննա** → պղինձ 2025 թ. մալուխներից

Տոկոսային փոփոխությունները ըստ Շրջանակ 3-ում ներառված կատեգորիաների ներկայացված է ստորև աղյուսակում՝

Կատեգորիա	2023 (տ CO <sub>2</sub> համ.)	2025 (տ CO <sub>2</sub> համ.)	փոփոխություն
Կատեգորիա 1 Ձեռքբերված ապրանքներ	8 904	3 853.4	-56.7 %
Կատեգորիա 1 Ձեռքբերված ծառայություններ	4 057	5 146	+26.8 %
Կատեգորիա 3 Վառելիք և էներգիա	2 648	2 946	+11.3 %
Կատեգորիա 5 Թափոններ	120	355	-97.0 %
Կատեգորիա 11 Վաճառված ապրանքներ	150	353.2	+135.5 %

2025 թ. Շրջանակ 3 ՋԳ արտանետումների փաստացի արդյունքները ներկայացված են ստորև աղյուսակում և գծապատկերում՝

Ցուցանիշ	2023 Էլակետային	2025 փաստացի
Շրջանակ 3 (տCO <sub>2</sub> համ.)	15 880.1	12 302
%- ալին փոփոխություն Էլակետային տարվա համեմատ	-	+22.5 %



### ՏԱՐԵՎԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԹԻՐԱՆՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԱՂՅՈՒՍԱԿ

Թիրախ	2025 փաստացի արդյունք	Թիրախի նկատմամբ
Շրջանակ 1, 2, 3՝ 10%-ական նվազեցում 2025 թ. համար	Շրջանակ 1+2: -23% Շրջանակ 3: -22.5 %	Գերակատարված
Արևային արտադրանք (արևային էներգիայի) +70% Էլակետայինի նկատմամբ	+77%	Գերակատարված
Սվտոպարկի էլեկտրաֆիկացում՝ 25%	28.9%	Գերակատարված
Էներգախնայող լուսավորման անցում Ընկերության բոլոր վարչական գրասենյակներում	Մասնակի ավարտված	Մասնակի
11 քաղաքներում պղնձի փոխարինում 0.190.1-ով	Ավարտված	Կատարված
ISO 14001 - ի համար բնապառօղիտի անցում	Սուդիտ՝ դրական եզրակացությամբ	Կատարված
Ընկերության ընդլայնման արդյունքում բնապահպանական ստանդարտների համապատասխանության ապահովում	Արտաքին ատդիտի կողմից իրականացված PУԿՀ մոնիտորինգի ընթացքում Ընկերության գործունեության և բնապահպանական ստանդարտների ապահովման վերաբերյալ դրական եզրակացություն անկախ ընկերությունից	Կատարված
ՋԳ թիրախներին հասնելու գիտականորեն հիմնավորված և միջազգային մեթոդաբանության ակադեմիայի հաստատված SBTi -ի կողմից	Հայտի ներկայացում SBTi -ի հաստատմանը (գիտականորեն հիմնավորված ՋԳ թիրախներ և ճանապարհային քարտեզ)	Կատարված
Էներգախնայող վարքագծի խրախուսման մեխանիզմների ներդրում Ընկերության գրասենյակներում	Ներածական պարտադիր բնապ. դասընթաց բոլոր աշխատակիցների համար՝ գիտելիքների ստուգմամբ և բնապ. ՀԿՑ-ների սահմանում Ընկերության ստորաբաժանումների համար (ապտոսադիտ ուսուցողական դասընթաց և ՀԿՑ-ների ակադեմիայի)	Կատարված

Ընկերության Շրջանակ 1 և 2, ինչպես նաև Շրջանակ 3 ՋԳ արտանետումների նվազման փաստը հավաստվել է անկախ երրորդ կողմի եզրակացությամբ և հասանելի է Ընկերության կայքում հետևյալ հղումով [https://www.telecomarmenia.amParty%20Opinion\\_arm.pdf](https://www.telecomarmenia.amParty%20Opinion_arm.pdf)


## ՏԱՐԵԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

### ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՄՈԿ

Հաշվետու տարվա ընթացքում ընկերության աշխատակիցների շրջանում`




մահվան ելքով պատահարներ չեն գրանցվել



արտադրական պատահարներ (ֆիզիկական վնասվածք, կոտորվածք, այլ) չեն գրանցվել



սննդով պայմանավորված թունավորումներ չեն գրանցվել



համաճարակային իրավիճակներ չեն գրանցվել



ԷՄԴ ճառագայթման դեպքեր չեն գրանցվել


Ճանապարհատրանսպորտային պատահարները նվազել են. 2025թ-ին գրանցվել է թվով 30 ճՏԴ՝ համեմատած 2024 թ. գրանցված 43 ճՏԴ-ի:

Ընկերությունում ներդրված է զրո հանդուրժողականության քաղաքականություն ցանկացած տեսակի խտրականության, սեռական ոտնձգությունների, անչափահասների և հարկադիր աշխատանքի կիրառման նկատմամբ:


«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն հանդես է գալիս որպես ներառական գործատու՝ ապահովելով հավասար վերաբերմունք և հնարավորություններ բոլոր աշխատակիցների համար՝ անկախ անհատների տարբերակիչ հատկանիշներից:

Այս մոտեցման շրջանակում մենք պարբերաբար գնահատում և վերլուծում ենք Նաև աշխատակազմի գեղդերային կազմը, ինչպես նաև խթանում ենք ներառական աշխատանքային միջավայրի զարգացումը՝ ներդրված քաղաքականություններին համահունչ: 2025 թվականին անանուն բողոքների ստացման «Speak Up» հարթակով ստացվել է թվով 4 (չորս) դիմում, որոնք ուսումնասիրվել և լուծվել են սահմանված ընթացակարգերին համապատասխան:

## ԱՇԽԱՏՈՒԹԻ ԿԱԶՄԸ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲԱՇԽՄԱՄԲ



## ԱՇԽԱՏՈՒԹԻ ԿԱԶՄԸ ԸՍՏ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ



## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն իր գործունեությունն իրականացնելիս առաջնորդվում է ոչ միայն շրջակա միջավայրի պահպանության, սոցիալական պատասխանատվության և աշխատանքային անվտանգության ապահովման վերաբերյալ ՀՀ ներպետական օրենսդրությամբ, այլև, սկսած 2022 թվականից, մշակել և ներդրել է միջազգային առաջատար ստանդարտներին համահունչ գործառնական համակարգ, որի ներքո գործում է հետևյալ փաստաթղթային շրջանակը`

- Բնապահպանական և սոցիալական ազդեցությունների կառավարման քաղաքականություն
- Շրջակա միջավայրի Պահպանության և Սոցիալական Կառավարման Պլան,

- ԲՍԿԶ Ձևնման ընթացակարգ և Ռիսկերի գրանցամատյան,
- Շահառուների Ներգրավման Պլան,
- Գենդերային խտրականության բացառման քաղաքականություն,
- Սեռական ոտնձգությունների բացառման քաղաքականություն,
- Անչափահասների աշխատանքի կանխարգելման քաղաքականություն,
- Հարկադիր աշխատանքի բացառման քաղաքականություն,
- Մտահոգությունների բարձրաձայնման «Speak Up» հարթակ (բողոքարկման մեխանիզմի և չհետապնդելու քաղաքականություն),
- Արտակարգ իրավիճակների պատրաստվածության և արձագանքման պլան:
- Համայնքների անվտանգության և առողջության պահպանման քաղաքականություն,
- Աշխատանքային անվտանգության և առողջության ապահովման քաղաքականություն և կառավարման պլան (ներառյալ ուսուցման, հետաքննությունների անցկացման կարգեր),
- Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման քաղաքականություն,
- Անվտանգության կառավարման պլան,
- Բիզնես գործընկերների Վարքագծի կանոնակարգ և Կոմպլայենսի դրույթներ,
- Բիզնես Գործընկերների Ստուգման ընթացակարգ,
- Կաշառակերության և կոռուպցիայի կանխարգելման քաղաքականություն,
- Աշխատավորների միությունների խրախուսման քաղաքականություն,

2025 թ. ընթացքում, հաշվի առնելով Ընկերության գործունեության ընդլայնումը, մշակվել և ներդրվել են նաև հետևյալ ԲՍԿԶ ընթացակարգերը`

- Էլեկտրական մեքենաների լիցքավորման կայանների և թափոնների կառավարման պլան,
- ՋԳ արտանետումների կրճատման պլան (Շրջանակ 1, 2 և Շրջանակ 3)
- Կլիմայական ռիսկերի կառավարման պլան

Միևնույն ժամանակ, վերանայվել և փոփոխվել են Ընկերության այն ընթացակարգերը, որոնցում նշված տեխնիկական գործառնությունները կարող են բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Վերոնշյալ փաստաթղթային շրջանակը վերանայվում և բարեփոխումների է ենթարկվում տարեկան կտրվածքով, իսկ ոլորտի խնդիրների բացահայտման կամ արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում` նաև ըստ անհրաժեշտության:

Ընկերության բոլոր ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցներն առանձնացված կամ համատեղված գործառնություններով ներառված են վերոնշյալ գործառնական համակարգի իրականացման ողջ գործընթացում, իսկ բնապահպանական և սոցիալական ԿԶՑ-ներն ու ռիսկերը մշտադիտարկվում և ներկայացվում են ինչպես բնապահպանության գծով ստեղծված աշխատանքային խմբի դիտարկմանը, այնպես էլ Ընկերության գործադիր կոմիտեին և Խորհրդին:

## ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԻՐԱԶԵԿԱԾՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՄ

2025թ. ընթացքում «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն միացել է բնապահպանական օրացույցի թվով երկու ամենակարևոր միջոցառումներին` ապրիլի 22-ին նշվող Երկրի օրվան և հունիսի 5-ին նշվող Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին:

Վերոնշյալ օրերին Ընկերության արտաքին և ներքին լսարանի համար կազմակերպվել են բնապահպանական իրազեկվածության բարձրացմանն ուղղված նախաձեռնություններ` հանրության ուշադրությունը սեռելով Երկրի հիմնական բնապահպանական մարտահրավերներին և դրանց լուծման եղանակներին:

2025 թ. Երկրի օրվա շրջանակում Ընկերությունը մեկնարկեց և իրականացրեց կայուն զարգացման նախագիծ` ներգրավելով նաև իր բաժանորդներին: Ապրիլի 22-ին նախորդած շաբաթվա ընթացքում վաճառված յուրաքանչյուր սմարթֆոնի դիմաց ընկերությունը տնկեց 10 ծառ` հիմնելով 1 հեկտար անտառ Լոռու մարզի Բովաձոր համայնքում:

Անտառապատման աշխատանքները կատարվեցին ոլորտում բազմամյա փորձ ունեցող «Արմենիա Թրի Փրոջեքթ»-ի (ATP) հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նաև անտառի հետագա խնամքն ու սպասարկումը:


## ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ԿԱՆՈՆՆԵՐ

«Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ն արժևորում է բաց, ազնիվ և թափանցիկ գործարար հարաբերություններն ու փոխադարձ վստահությունը բոլորի` հաճախորդների, աշխատակիցների, գործընկերների և բաժնետերերի հետ: Այդ մշակույթի պահպանումն ապահովելու նպատակով էլ Ընկերությունում ներդրված են կորպորատիվ էթիկայի և կոմպլայենսի միջազգային բարձրագույն ստանդարտներ: Դրանք ամփոփված են մի շարք էթիկական ուղեցույցներում, որոնք հստակ նկարագրում են մեր գործունեության չափորոշիչներն և ակնկալիքները: Մեր բարոյական սկզբունքները և վարվելակերպի ստանդարտներն արտացոլված են Ընկերության «Վարվելակերպի կանոնակարգում», որը հանդիսանում է Ընկերության արժեքների հիմնարար ուղեցույցը:

Մեր բոլոր աշխատակիցները` անկախ զբաղեցրած հաստիքից և պատասխանատվության սահմաններից, ինչպես նաև բոլոր երրորդ անձինք, ովքեր հանդես են գալիս Ընկերության անունից, պարտավոր են հետևել Կանոնակարգի պահանջներին:

# 02 ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏԿՈՒԹՅՈՒՆ

## 2.1 ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՇԱԿԱԳՃԱԿԵՐԱԿԱՆ ԿԱՌՈՍՎԱԾՔՐ



ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

Նախագծերի կառավարման բաժին

- Zեռուստատեսային ծառայությունների բաժին
  - Zեռուստատեսային այլիքների մուտքային ազդանշանների համակարգման և Headend թիմ
  - Zեռուստատեսային սպասարկման և մոնիտորինգի թիմ
  - Zեռուստատեսային հարթակների ծրագրավորման թիմ

- Zուսթինգի և ամպային ենթակառուցվածքի բաժին
  - Ամպային լուծումների (Cloud) և Hosting, Domain, Mail ծառայությունների թիմ
  - Zամատեղակայման և մշտադիտարկման թիմ
  - Zետազոտման և զարգացման թիմ

- IP/MPLS ցանցի վարչություն**
  - B2B հասանելիության ցանցի բաժին
  - IP/MPLS ցանցի բաժին
  - B2C հասանելիության ցանցի բաժին

- Նյութերի շրջանառության վերահսկման և հաշվետվությունների բաժին
  - Zաշվետվությունների թիմ
  - Տեխնիկական աշխատանքների վերահսկման թիմ
  - Գույքագրման թիմ

Ցանցի շահագործման և մշտադիտարկման բաժին

- Տրանսմիսիոն ցանցի վարչություն**
  - Տրանսմիսիոն ցանցի պլանավորման, օպտիմիզացման և շահագործման բաժին
    - OMC (Operation maintenance center) թիմ
    - Տրանսմիսիոն ցանցի պլանավորման և օպտիմիզացման թիմ
    - Տրանսմիսիոն ցանցի սպասարկման թիմ

- Տեխնիկական և էլեկտրական միջավայրի վարչություն**
  - Տեխնիկական և էլեկտրական միջավայրի կառուցման, շահագործման և սպասարկման բաժին
    - Վերակառուցման և թեստավորման լաբորատորիա
    - Zուկացման համակարգերի կառուցման և սպասարկման թիմ
    - Էներգահամակարգերի շահագործման և սպասարկման թիմ
    - Տեխնիկական ենթակառուցվածքների կառուցման և սպասարկման թիմ

Սկոփիլների կառավարման բաժին

- Օպորայությունների որակի վերլուծության բաժին
  - IP հիմնական և սահմանային ցանցի բաժին
    - Ցանցային ենթահամակարգի թիմ
    - Zիմնական և սահմանային երթուղիչների թիմ

Բյուջեի և գնումների բաժին

Ֆիքսված ցանցի կառավարման բաժին

Տվյալների վերլուծության բաժին

- Ռադիո հասանելիության ցանցի վարչություն**
  - Ռադիոցանցի պլանավորման և օպտիմիզացման բաժին
  - Ռադիոցանցի ինտեգրացիայի և կառավարման բաժին
  - Ռադիոցանցի նախագծման և ներդրման բաժին
  - Բազային կայանների շահագործման և սպասարկման բաժին

- Բազային կայանների և նախագծերի կառավարման բաժին
  - Նախագծման և շինարարության փաստաթղթավորման թիմ
  - Բազային կայանների ձեռքբերման թիմ

- Շինարարության բաժին
  - Բջջային կայանների շինարարության թիմ
  - Բջջային կայանների շինարարության վերահսկողության թիմ
  - Ֆիքսված ցանցի շինարարության թիմ
  - Ֆիքսված ցանցի շինարարության վերահսկողության թիմ

- Ձայնային և բջջային հիմնական ցանցի վարչություն**
  - IP մուլտիմեդիայի բաժին
  - Բջջային հիմնական ցանցի բաժին
  - IREG և SIM բարտերի բաժին

- Ցանցի պլանավորման, կառուցման և շահագործման վարչություն
  - Երևանի և հարակից մարզերի ցանցի շահագործման բաժին
    - Երևանի հյուսիս ցանցի շահագործման թիմ
    - Երևանի հարավ ցանցի շահագործման թիմ
    - Երևանի կենտրոն ցանցի շահագործման թիմ
    - Արմավիրի ցանցի շահագործման թիմ
    - Արարատի ցանցի շահագործման թիմ
    - Կոտայքի ցանցի շահագործման թիմ
    - Արագածոտնի ցանցի շահագործման թիմ
  - ՕՊՄԹ ցանցի մոնիտաժման և երակցման բաժին
    - ՕՊՄԹ ցանցի մոնիտաժման թիմ
    - ՕՊՄԹ ցանցի երակցման թիմ
    - ՕՊՄԹ ցանցի մարզային մոնիտաժման և երակցման թիմ
  - Zամակցման բաժին
    - Կորպորատիվ համակցման թիմ
    - Կոտայքի մարզի համակցման թիմ
    - Արմավիրի մարզի համակցման թիմ
    - Արարատի մարզի համակցման թիմ
    - Արագածոտնի մարզի համակցման թիմ
    - Երևանի հաճախորդների սպասարկման և սարքերի սպամոնիտաժման ու կարգաբերման թիմ
    - Երևան համայնքի համակցման թիմ 1
    - Երևան համայնքի համակցման թիմ 2
    - Ցանցի գործառնությունների համակարգման թիմ

- Մարզային ֆիքսված ցանցերի շահագործման բաժին
  - Գեղարքունիքի ցանցի շահագործման թիմ
  - Տավուշի ցանցի շահագործման թիմ
  - Շիրակի ցանցի շահագործման թիմ
  - Լոռու ցանցի շահագործման թիմ
  - Վայոց ձորի ցանցի շահագործման թիմ
  - Սյունիքի ցանցի շահագործման թիմ

- Ֆիքսված ցանցի կառուցման բաժին
  - Ստորգետնյա մալուխների անցկացման թիմ

- Կատարողականների և ընթացակարգերի մշակման բաժին
  - Սարքերի դուրս գրման թիմ

## 2.2 Խորհրդի անդամներ



**Վլեքսանդր Եսայան**  
Խորհրդի նախագահ

ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկ», Տնտեսագետի որակավորում

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Ֆայրբրոք Էյայ» ՓԲԸ, Գլխավոր տնօրեն՝ 2025թ.-ից
- «Մանդալ Էյ Այ» ՍՊԸ, գործադիր տնօրեն, 2021թ.-ից
- «ԹԻՍ» ՓԲԸ, Գլխավոր Տնօրենի խորհրդական ռազմավարության մասով, 2021թ.-ից
- «Տեղեկատվական տեխնոլոգիաների և ծառայությունների համաշխարհային ընկերակցություն» (WITSA), Տնօրենների խորհրդի անդամ, 2018թ.-ից
- «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» նախագահ, 2015թ.-ից
- «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան», Հոգաբարձուների խորհրդի անդամ, 2020թ.-ից
- «Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբ», Հոգաբարձուների խորհրդի պատվավոր նախագահ, 2022թ.-ից
- «Յուրոն» ՍՊԸ փոխտնօրեն, 2007 – 2020թթ.

### Հայկ Եսայան

Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրեն



ՀՊՃՀ «Հաշվողական մեթոդներ, համալիրներ և ցանցեր», ճարտարագիտության բակալավրի աստիճան

ՀՊՃՀ, «Ինֆորմատիկա և կոմպյուտերային համակարգեր», մագիստրոսի աստիճան

ՄՖԲ ֆինանսական ակադեմիա, «Ֆինանսներ և վարկ», Տնտեսագետի որակավորում

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «ԹԻՍ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2020թ.-ից առ այսօր
- «Թիմ հոլդինգ» ՓԲԸ, գլխավոր տնօրեն, 2021թ.-ից
- «Թիմ Փեյ» ՓԲԸ, տնօրենների խորհրդի նախագահ, 2021թ.-ից
- «Կողբ» հիմնադրամում հոգաբարձուների խորհրդի անդամ, 2013թ.-ից
- «Յուրոն» ՍՊԸ խորհրդի անդամ, գլխավոր տնօրեն, 2007 – 2020թթ.
- «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ, գլխավոր տնօրեն, 2020թ.-ից առ այսօր



### Արամ Բարսեղյան

Խորհրդի անդամ, Գլխավոր տնօրենի տեղակալ

ԵՊՀ, «Արևելագիտության ֆակուլտետ», Արաբագետի որակավորում, Մագիստրոսի աստիճան

Շեֆիլդի համալսարան, «Բիզնես կառավարում», Մագիստրոսի աստիճան

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Թիմ Փեյ» ՓԲԸ, խորհրդի անդամ, 2020թ.-ից
- «Յուրոն» ՍՊԸ, կոմերցիոն տնօրեն, 2011 – 2020թթ.



### Վլեքրտ Տոնեյան

Խորհրդի անկախ անդամ

ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ»

Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարան «Ֆիզիկայի ֆակուլտետի ասպիրանտուրայի բաժին»

Գիտական աստիճանը՝ Ֆիզ-մաթ գիտությունների թեկնածու

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Վեբ» ՍՊԸ, տնօրեն, 1996թ.-ից
- «Վեբ» ՍՊԸ, տնօրեն, 2006թ.-ից
- «Լիր» ՍՊԸ, տնօրեն, 2018թ.-ից
- «Ինտերնետ հասարակություն» ՀԿ խորհրդի անդամ և փոխնախագահ, 1995թ.-ից
- «ՀՀ Ինտերնետ կառավարման համաժողովի» անդամ
- «Արմիքս» հիմնադրամ, նախագահ, 2010թ.-ից



### Արտավազդ Մինասյան

Խորհրդի անկախ անդամ

ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ» բակալավրի աստիճան

ԵՊՀ, «Ֆիզիկայի ֆակուլտետ», մագիստրոսի աստիճան

ՀԱՀ, «Գործարար վարչարարության», մագիստրոսի կոչում

ԵՊՀ, «Մաթեմատիկայի ֆակուլտետ», գիտական աստիճան

Նախորդ 5 տարվա ընթացքում զբաղեցրած ղեկավար պաշտոններ՝

- «Քրիսփ Թեքնոլոջիս» ՍՊԸ (“Krisp Technologies” LLC), տնօրինության նախագահ, 2017թ.-ից
- «Թենվեբ» ՍՊԸ, տնօրինության նախագահ, 2017թ.-ից
- «Բիզնեսի ՎիՍԻ», հիմնական մասնակից (general partner), 2021թ.-ից

## 2.3 Ռիսկային գործոնները

Ստորև ներկայացված են այն ռիսկերը, որոնք Ընկերությունը հաշվետվության ներկայացման պահի դրությամբ համարում է էական, սակայն կարող են լինել լրացուցիչ ռիսկեր, որոնք Ընկերությանը այս պահին հայտնի չեն կամ Ընկերությունը դրանք համարում է ոչ էական:

### 1. Մրցակցային ռիսկ

Ընկերության գործունեության՝ հեռահաղորդակցության շուկայում առկա է մրցակցություն, և ժամանակ առ ժամանակ հնարավոր է դրա ուժգնացում, ինչը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնական և/կամ ֆինանսական ցուցանիշների վրա:

Վերջին տարիներին հեռահաղորդակցության ոլորտում աճել է պահանջարկը համակցված (կոնվերգենտ) փաթեթային առաջարկների նկատմամբ, որոնք ներառում են երկու կամ ավել ամրակցված և շարժական կապի ծառայություններ: Ընկերության ամրակցված և շարժական ենթակառուցվածքների համակցությունը համարվում է լավագույններից մեկը, ինչը թույլ է տալիս շուկայում ներկայացնել համակցված (կոնվերգենտ) փաթեթների գրավիչ առաջարկներ: Բացառված չէ, որ մրցակիցները ինչ-որ պահի նույնպես ձգտեն բարելավել իրենց համակցված (կոնվերգենտ) փաթեթների առաջարկները: Կոնվերգենտ ծառայությունների մատուցման շուկայում Ընկերության հիմնական մրցակիցն է «Յուքոմ» ՓԲԸ-ն: «Վիվա Արմենիա» ՓԲԸ-ն, համագործակցելով մի շարք ընկերությունների հետ առաջարկում է կոնվերգենտ փաթեթներ:

Հեռահաղորդակցության շուկայի բոլոր խաղացողները, այդ թվում և Ընկերությունը, ստիպված են մրցակցել նաև ծայնային ծառայություններին այլ ընտրանք առաջարկող «WhatsApp», «Viber», «Facebook Messenger» և այլ նմանատիպ OTT ծառայություններ առաջարկող ընկերությունների հետ, ինչպես նաև հեռուստատեսային և ժամանցային բովանդակություն ունեցող այլ հարթակների հետ:

Վերոնշյալ մրցակցային ռիսկը նվազեցնելու նպատակով Ընկերությունը այժմ կառուցում է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) FTTH (Fiber to the Home - Օպտիկա մինչև բնակարան) օպտիկամանրաթելային ցանց:

Ընկերության գործունեության վրա որոշակի բացասական ազդեցություն կարող են ունենալ մրցակիցների հետևյալ գործողությունները՝

- ցածր (դեմպինգային) գները որպես գնային պատերազմների (price wars) հետևանք,
- ցանցերի ավելի արագ ընդլայնումը մրցակիցների կողմից:

Ընկերության դիրքը շուկայում կախված է նաև Ընկերության կողմից իրականացվող մարքեթինգային նախաձեռնություններից, առաջարկվող փաթեթներից և ծառայություններից, նոր առաջարկներից և իրականացվող ռազմավարությունից: Ընկերությունն ունի հմուտ և փորձառու կոմերցիոն թիմ, որն, արագ արձագանքելով շուկայի և հաճախորդների նախասիրությունների ու վարքագծի փոփոխություններին, ապահովում է Ընկերության մրցակցային առավելությունը:

### 2. Տեխնոլոգիական զարգացումներ

Տեխնոլոգիական արագ զարգացումները կարող են նպաստել մրցակցության աճին, ինչպես նաև Ընկերության և առկա մրցակիցների տեխնոլոգիաների արդիականության հնարավոր կորստին:

Մրցունակ լինելու նպատակով Ընկերությանը կարող է անհրաժեշտ լինել ներդրումներ կատարել իր ենթակառուցվածքների արդիականացման կամ լիցենզիաների/թույլտվությունների ձեռքբերման և նոր տեխնոլոգիաների զարգացման և ներդրման համար: Այս ներդրումներն իրականացնելու ծախսը կարող է լինել էական, և չի բացառվում, որ ժամանակ պահանջվի շուկայում նոր տեխնոլոգիան դրամայնացնելու (monetizing) համար:

Տվյալ ռիսկը առկա է շուկայի բոլոր խոշոր խաղացողների համար:

### 3. Կապիտալ ծախսերի և շրջանառու կապիտալի հետ կապված ծախսեր

Ընկերության գործունեության ոլորտն իր տեսակով ծախսատար է, և իր մրցակցային դիրքը պահպանելու և/կամ առավել բարելավելու համար Ընկերությունը իրականացնում է մեծ ծավալի կապիտալ և շրջանառու կապիտալի ներդրումներ: Մասնավորապես Ընկերության առկա ենթակառուցվածքների (օպտիկամանրաթելային և բջջային ցանցերի) ընդլայնումն ու շահագործումը պահանջում են ծավալուն կապիտալ ներդրումներ:

Վերջին տարիներին Ընկերությունը զգալի ներդրումներ է կատարել հաճախորդների ներգրավման և պահպանման նպատակով, ներառյալ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման, նոր տեխնոլոգիաների (ինչպես, օրինակ, GPON-ի ներդրումը), ինչպես նաև գոյություն ունեցող ցանցերի արդիականացման ծախսերը (ինչպիսին է օրինակ FTTB/FTTH ցանցի ներդրումը): Ընկերության կապիտալ ներդրումների հիմնական խոշոր ուղղություններն են՝

- Ընկերության ամրակցված օպտիկամանրաթելային ցանցի ընդլայնումը,
- Ընկերության բջջային ցանցի ընդլայնումն ու զարգացումը,
- Բաժանորդային սարքավորումների (CPE) և նոր հաճախորդների ձեռքբերման հետ կապված ծախսերը,
- հեռահաղորդակցության լիցենզիաների և թույլտվությունների հետ կապված վճարները,
- հեռարձակման իրավունքների ձեռքբերումը:

Ընկերությունն իր կապիտալ ծախսերը և շրջանառու կապիտալի կարիքը ֆինանսավորելու նպատակով օգտագործում է գործառնական գործունեությունից առաջացած դրամական միջոցների, ֆինանսական պարտավորությունների և այլ ֆինանսական գործիքների համակցությունը:

Ընկերության իրացվելիության և կապիտալի պահանջները կարող են աճել, եթե ընդլայնվեն գործունեության ոլորտները և արագացվեն աճի տեմպերը:

Եթե որևէ պատճառով Ընկերությունը չկարողանա գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերի միջոցով ապահովել անհրաժեշտ ֆինանսավորումն այս պահանջները բավարարելու համար (ներառյալ ցանցի և ծառայությունների առաջարկի ընդլայնումը), ապա Ընկերությունը կարող է հարկադրված լինել սահմանափակել իր գործունեության ընդլայնման հետ կապված ծրագրերը, ինչը կարող է հանգեցնել Ընկերության գործունեության վրա էական բացասական ազդեցության՝ ապագա աճի դանդաղման և մրցակցային դիրքի վատթարացման:

#### 4. Տնտեսական, քաղաքական և սոցիալական ռիսկեր

Ընկերության, ինչպես նաև մրցակիցների և առհասարակ ոլորտի հաջողությունը սերտորեն կապված է ՀՀ-ում ընդհանուր տնտեսական զարգացումների հետ: ՀՀ տնտեսական վիճակի վատթարացումը կարող է բացասական ազդեցություն ունենալ հաճախորդների վճարունակության և սպառման օրինաչափությունների վրա: Արդյունքում հնարավոր է, որ բաժանորդների մի մասը սահմանափակի Ընկերության որոշ ծառայությունների սպառումը, ինչի հետևանքով կարող է նվազել մեկ բաժանորդին ընկնող միջին հասույթի (ARPU) ներկա մակարդակը:

Գործունեության իրականացման համար անհրաժեշտ ծախսերի, մասնավորապես՝ Հայաստանում աշխատավարձերի աճը կարող է հանգեցնել Ընկերության գործառնական ծախսերի աճի:

Ի լրումն, ՀՀ քաղաքական վիճակի հետ կապված որևէ անորոշություն կամ անկայունություն՝ ներառյալ քաղաքական ռեժիմի, իրավական և կարգավորող նորմերի կամ կառավարման օրինակարգերի փոփոխությունը կարող է բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնականության վրա:

Տնտեսական և քաղաքական բացասական զարգացումները կարող են վտանգել Ընկերության կողմից սահմանված նպատակների իրականացումը և կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

#### 5. Արտաբժութային ռիսկ

Ընկերության կապիտալ ներդրումների մեծ մասը, ինչպես նաև որոշակի տեսակի ծառայությունների (ռոումինգ, միջազգային զանգեր, միջազգային կապուղիներ և այլն) և մեծածախ ինտերնետի առուվաճառքն իրականացվում է արտաբժութով: Ուստի Ընկերությունում առկա է նաև արտաբժութային ռիսկի գործոնը՝ կապված փոխարժեքի հնարավոր տատանումների հետ:

Հարկ է նշել, որ արժութային ռիսկի գծով ղեկավարությունը որոշում և հաստատում է ռիսկերի նկատմամբ խոցելիության մակարդակի սահմանաչափեր ինչպես ըստ առանձին արժույթների, այնպես էլ ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական կտրվածքով:

#### 6. Ցանցային ռիսկեր

Ընկերության բջջային կապի ծառայությունների, ամրակցված ինտերնետի և հեռախոսակապի, ինչպես նաև հեռուստատեսության ծառայությունների մատուցումն իրականացվում է սեփական հաղորդման ցանցերի միջոցով: Բացի այդ, Ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների համակարգը ներառում է բազմաթիվ ներկապակցված համակարգեր, որոնք պարբերաբար թարմացվում, արդիականացվում, բարելավվում և ինտեգրվում են նոր համակարգերին:

Ընկերության՝ ծառայություններ մատուցելու կարողությունը կախված է իր ցանցերի շարունակական, անխափան աշխատանքից և համակարգերի թարմացումներից: Չի կարելի բացառել վերջիններիս բնականոն աշխատանքի հնարավոր կարճաժամկետ խափանումները:

Աղետներից վերականգնման, անվտանգության և ծառայության շարունակականության պահպանման միջոցառումները, որոնք Ընկերությունը ձեռնարկել է կամ կարող է ապագայում ձեռնարկել (այդ թվում նաև ցանցի աշխատանքի մոնիտորինգը), կարող են ինչ-որ պահի անբավարար լինել կորուստները կանխելու համար:

Խափանումները կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության վրա:

Ներկայումս Ընկերությունը ցանցային խափանումների կառավարումն ու դրանց հնարավորինս բացառումը համարում է ամենօրյա իր գործառնականության առանցքային նպատակներից մեկը: Ցանցի անխափան աշխատանքն ապահովում են Ընկերության՝ տվյալ ոլորտի լավագույն մասնագետները:

## 7. Անձնակազմի հետ կապված ռիսկեր

Ընկերության արդյունավետ շարունակական աշխատանքը կախված է առանցքային ղեկավար անձնակազմի և աշխատակիցների փոխադարձ համագործակցությունից:

Բարձր որակավորում ունեցող ղեկավար անձնակազմի ներգրավման համար մրցակցությունը հեռահաղորդակցության ոլորտում բավականին մեծ է: Ընկերության ապագա գործառնական արդյունքները մեծապես կախված են առկա ղեկավար կազմի արհեստավարժությունից և Ընկերության ղեկավար անձնակազմը բարձր որակավորում ունեցող մասնագետներով համալրելու ունակությունից:

Ընկերությունը մշտապես աշխատում է համակարգային մոտեցումների ներդրման ուղղությամբ, որպեսզի նվազեցվի անհատի գործունի ազդեցությունը Ընկերության ընթացիկ գործունեության ու հեռանկարային զարգացման վրա, և ղեկավար անձնակազմի որևէ առանցքային անդամի աշխատանքային հարաբերությունների դադարեցումը էական ազդեցություն չունենա Ընկերության անխափան գործունեության և գործառնական արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ Ընկերության ռազմավարության ուղղվածությունը կարող է ենթարկվել փոփոխությունների՝ Ընկերության Տնօրենների Խորհրդի կազմի փոփոխության արդյունքում:

## 8. Որակի ապահովման ռիսկ

Եթե Ընկերությանը չհաջողվի պահպանել կամ բարելավել իր մատուցած ծառայությունների որակը, կարող է վատթարանալ նոր հաճախորդներ ներգրավելու և առկա հաճախորդներին պահպանելու ունակությունը:

Առկա հաճախորդներին պահպանելու և նոր հաճախորդներ ներգրավելու ունակությունը կախված է ծառայությունների մատուցման որակից և Ընկերության բարի համբավից՝ Ընկերությունը մատուցվող ծառայությունների որակի հետևողական բարելավումը համարում է իր ռազմավարական առաջնահերթություններից մեկը:

Ընկերության հեղինակությունը և ապրանքանիշը հիմնականում դրական են անդրադառնում նոր կամ առկա ծառայությունները նոր հաճախորդներին ներկայացնելու հնարավորության վրա, սակայն պետք է նշել, որ Ընկերության հեղինակությանը հասցված վնասը կարող է բացասաբար անդրադառնալ գործունեության արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

## 9. Պահանջարկի նվազման ռիսկ

Հայաստանում հեռահաղորդակցության ծառայությունների պահանջարկն էականորեն ազդում է ինչպես Ընկերության, այնպես էլ մրցակիցների գործունեության վրա:

Եթե հեռահաղորդակցության ծառայությունների պահանջարկն ընդհանուր առմամբ չաճի, կամ առաջանան խոչընդոտներ նոր հաճախորդների ներգրավման գործում, դա կարող է բացասաբար ազդել Ընկերության գործունեության և ֆինանսական ցուցանիշների վրա:

## 10. Վերահաղորդման իրավունքների ռիսկ

Բանակցությունները տեսաբովանդակության (video-content) և հեռուստաալիքների արտադրողների/իրավատերերի հետ կրում են շարունակական բնույթ: Ընկերությունը մշտապես ձգտում է ավելի որակյալ, բարձր վարկանիշ ունեցող հեռուստաալիքներ և տեսաբովանդակություն (video-content) տրամադրել իր հաճախորդներին: Հնարավոր են դեպքեր, երբ այս կամ այն հեռուստաալիքը, բովանդակության ստեղծող դադարեցնի իր գործունեությունը տվյալ տարածաշրջանում կամ ընդհանրապես: Կան դեպքեր, երբ իրավատերը ավելի մեծ եկամուտ ստանալու ակնկալիքով, պայմանագրի ժամկետի ավարտից հետո, ցանկանում է զգալիորեն ավելացնել ծառայության գինը:

Նման իրավիճակներում Ընկերությունն ընտրում է կամ փոխարինել մատակարարին, կամ դադարեցնել համագործակցությունը, կամ էլ հարկադրված է լինում ընդունել ծառայության ավելի բարձր արժեքը (եթե տվյալ հեռուստաալիքը կամ հեռուստաալիքի բովանդակությունն ունի բարձր վարկանիշ):

Նշված դեպքերում չի բացառվում, որ Ընկերությունն ունենա գործառնական ծախսերի որոշակի աճ: Նման ռիսկերը հնարավորինս նվազեցնելու համար Ընկերությունը ձգտում է իր վերահեռարձակման պայմանագրերը կնքել երկարաժամկետ (3 տարի ժամկետով), սակայն լինում են նաև դեպքեր, երբ պայմանագրերը կնքվում են 1-2 տարի ժամկետով:

Ընկերության գործունեության հաջողությունը, ի թիվս այլ հանգամանքների, կախված է հաճախորդներին մատուցած հեռուստատեսային ծրագրերի որակից և բազմազանությունից: Հեռուստատեսային ծրագրերի որակի և բազմազանության ապահովման հարցում ամեն ինչ չէ, որ կախված է միայն Ընկերությունից. հնարավոր են դեպքեր, երբ անկախ Ընկերության կամքից տեղի է ունենում որակի անկում (օրինակ՝ վատ եղանակային պայմանների ժամանակ հնարավոր են արբանյակից աղավաղված ազդանշանի ստացման կամ դրա թուլացման խնդիրներ, կամ ծրագրային խնդիրներ/վթարներ հեռուստատեսային ծրագրերի մատակարարի մոտ):

Հեռուստատեսային ծրագրերի և բովանդակային բազմազանության վրա կարող են ազդեցություն ունենալ տարատեսակ հանգամանքներ, ինչի հետևանքով կարող է տուժել հեռուստաալիքի բազմազանությունը: Ընկերությունն իրականացնում է բազմաթիվ տեխնիկական միջոցառումներ և բանակցային գործընթացներ՝ իրեն և իր հաճախորդներին նմանատիպ խնդիրներից ու ռիսկերից ապահովագրելու համար:

### 11. Հաճախորդների արտահոսքի (churn) ռիսկ

Շարժական և ամրակցված կապի ոլորտներին հատուկ է բաժանորդների արտահոսքը, որը, ի թիվս այլ գործոնների պայմանավորված է մրցակցության բարձր մակարդակով: Չի կարելի բացառել արտահոսքի հնարավոր աճ ինչ-որ ժամանակահատվածում՝ պայմանավորված որոշակի գործոններով: Ընկերության շարժական կապի ընդհանուր բաժանորդների արտահոսքի մակարդակը (churn rate) համապատասխանում է շուկայում գործող իր մրցակիցների ցուցանիշներին: Հաճախորդների արտահոսքը կարող է աճել հետևյալ հանգամանքների պատճառով.

- շուկայում մրցակիցների կողմից առաջարկվող որոշակի առավելություններով ծառայությունների առկայություն,
- Ընկերության ցանցերով ծառայությունների մատուցման հնարավոր խափանումներ,
- որոշակի ծառայությունների օգտագործումը դադարեցնելու մասին հաճախորդների որոշում՝ առանց դրանք փոխարինելու Ընկերության (կամ իր մրցակիցների) կողմից մատուցվող այլ համարժեք ծառայություններով:

Եթե Ընկերությանը չհաջողվի պահպանել հաճախորդների արտահոսքը ցածր մակարդակի վրա, դրա աճը կարող է հանգեցնել ինչպես հասույթի և բաժանորդների քանակի անկման, այնպես էլ բաժանորդներին պահպանելու աճող ծախսերին, ինչն իր հերթին կարող է եականորեն բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական կայունության վրա:

### 12. Վճարային համակարգի ռիսկ

Վճարումների (billing) և պարտավորությունների հսկողության արդյունավետ համակարգերն առանցքային նշանակություն ունեն՝ ապահովելու եկամտի կայուն հոսք, կանխելու հնարավոր կորուստները, վերահսկելու ծախսերն ու պարտքային ռիսկերը, ինչպես նաև հաճախորդներին ժամանակին և պատշաճ ձևով վճարային հաշիվներ ներկայացնելու գործընթացը:

Ընկերության համակարգերին պատճառված որևէ վնաս կամ վճարումների (billing) և պարտավորությունների վերահսկման համակարգերի համար օգտագործվող հիմնական և պահուստային սերվերների աշխատանքի ծախողումը կարող է ընդհատել Ընկերության բնականոն գործունեությունը և բացասաբար անդրադառնալ նրա հեղինակության, գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

Հարկ է նշել, որ Ընկերության վճարային համակարգերում տվյալների փոխանցման մեջ գործում է TLS 1.2 (Transport Layer Security) անվտանգության պրոտոկոլը, ինչն ապահովում է վճարումների տվյալների անվտանգությունը և բացառում տվյալների արտահոսքի հնարավորությունը:

### 13. Մատակարարների ռիսկ

Ընկերության գործունեությունը կապված է երրորդ անձանց կողմից տրամադրվող սարքավորումների, ծրագրային ապահովման, ապրանքների և ծառայությունների մատուցման հետ: Ընկերությունը հեռահաղորդակցության ոլորտում հանդիսանում է խոշոր, բարձր հեղինակություն վայելող կազմակերպություն և ունի երկար տարիների հաջողված գործարար հարաբերություններ իր հիմնական մատակարարների հետ: Ուստի, Ընկերության դիտարկմամբ, մատակարարների կողմից ապրանքների և ծառայությունների մատուցումը դադարեցնելու, ավելի բարձր գներ սահմանելու կամ գործող պայմանագրերը չերկարացնելու հավանականությունը շատ ցածր է:

Ընկերությունն ունի կայուն հարաբերություններ սարքավորումների, ծրագրային ապահովումների և ծառայությունների մատակարարների հետ, ինչպես նաև գործընկերային հարաբերություններ է հաստատում նոր մատակարարների հետ: Ընկերության դիտարկմամբ՝ այս մատակարարները համարվում են իրենց ոլորտում առաջատարներ, և վերջիններիս կողմից առաքման ժամկետները երկարաձգելու, անորակ սարքավորումներ առաքելու, գները բարձրացնելու, մատակարարումը սահմանափակելու կամ դադարեցնելու ռիսկը շատ ցածր է:

Այնուամենայնիվ, Ընկերությունը ենթակա է մատակարարների հավանական ֆինանսական անկայունության ռիսկերին: Եթե մատակարարները դադարեցնեն որոշ ապրանքների մատակարարումը, չկարողանան տրամադրել Ընկերության հատուկ պահանջմունքները բավարարող սարքավորումներ կամ դադարեցնեն ծառայությունների մատուցումը Ընկերությանը՝ թե՛ լուծարվելու, թե՛ այլ պատճառներով, և եթե Ընկերությանը չհաջողվի ժամանակին համապատասխան այլընտրանքային մատակարար գտնել, ապա դա կարող է բացասական ազդեցություն ունենալ վերջինիս գործունեության, հեռանկարների, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

#### 14. Լիցենզավորման և թույլտվությունների ոլիսկ

Ընկերության գործունեությունը կախված է պետական և կարգավորող մարմինների կողմից տրամադրվող լիցենզիաներից և թույլտվություններից: Առկա լիցենզիաները և թույլտվություններն ունեն գործողության ժամկետներ, որոնք կարող են երկարաձգվել Ընկերության հայտի հիման վրա: Այդ ուղղությամբ Ընկերությունը կնախաձեռնի բոլոր անհրաժեշտ քայլերը՝ թույլտվությունները և լիցենզիաները պահպանելու և երկարաձգելու համար:

Որոշ լիցենզիաների և թույլտվությունների ձեռքբերումը բարդ և երկարատև գործընթաց է, ինչը կարող է Ընկերությանը ենթարկել համապատասխանության հետ կապված շարունակական պարտավորությունների: Բացի այդ, եթե Ընկերությունը չկատարի կիրառելի օրենսդրության պահանջները կամ իր լիցենզիայի և թույլտվության պայմաններից որևէ մեկը, լիցենզիաները և գործունեության համար անհրաժեշտ այլ թույլտվությունները կարող են կասեցվել կամ դադարեցվել: Ընկերությունը շատ ցածր է գնահատում լիցենզիաների կամ այլ անհրաժեշտ պետական լիազորությունների կասեցման կամ դադարեցման հավանականությունը, սակայն տվյալ ոլիսկի ի հայտ գալը կարող է Էականորեն բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և գործառնական արդյունքների վրա:

Հարկ է նշել, որ պատմականորեն Ընկերության մոտ չի դիտարկվել անհրաժեշտ լիցենզիաների և/կամ թույլտվությունների կասեցման, դադարեցման կամ չերկարաձգման որևէ դեպք:

Ընկերության ցանցերի տեղակայումը պահանջում է տարբեր հաստատումներ կամ թույլտվություններ տեղական ինքնակառավարական մասնակցության կարգավորող մարմիններից, օրինակ՝ բջջային հեռահաղորդակցության ծառայությունների համար բազային կայանների տեղադրման համար: Այս հաստատումները և թույլտվությունները կարող են ներառել շինարարական և բնապահպանական թույլտվություններ, ալեհավաքների և կայմերի տեղակայման թույլտվություններ և այլ նախագծման թույլտվություններ: Այս հաստատումների և թույլտվությունների ստացումը կարող է բարդ գործընթաց լինել և հաճախ իրենից ենթադրում է տարբեր ընթացակարգերի և պահանջների կատարում տարբեր կարգավորող մարմինների կողմից, ինչը հաճախ հանգեցնում է երկարատև փաստաթղթավորման գործընթացների:

Ընկերությունը 2023թ.-ի մարտին ձեռք է բերել 700 ՄՀց տիրույթում ռադիոհաճախակալության հատվածի օգտագործման, իսկ ապրիլին՝ 1800 ՄՀց տիրույթում լրացուցիչ ռադիոհաճախակալության հատվածի օգտագործման թույլտվություն:

Հաշվի առնելով Ընկերության փորձառությունը՝ լիցենզիաների և թույլտվությունների ստացման, պահպանման և երկարաձգման հետ կապված ոլիսկերի մակարդակը գնահատվում է ցածր:

#### 15. Ապահովագրական ոլիսկեր

Ընկերության ներկա ապահովագրական ծածկույթը հիմնականում ներառում է հավանական կորուստները, պարտավորությունները ու գործունեության հետ կապված վնասները:

Ընկերության դիտարկմամբ՝ ապահովագրական քաղաքականությունը պատշաճ կերպով ապահովում է իր հիմնական հավանական կորուստների և պարտավորությունների ապահովագրությունը:

Ընկերությունն ունի հետևյալ ապահովագրական ծածկույթները.

- Գույքի և բոլոր ակտիվների ապահովագրություն,
- Երրորդ անձի պարտավորության ապահովագրություն,
- Բիզնեսի անխափանության ապահովագրություն,
- Բեռնափոխադրումների և ներքին տեղափոխությունների ապահովագրություն

Ներկայումս Ընկերության ակտիվների գերակշիռ մասն ապահովագրված է:

#### 16. Տվյալների արտահոսքի ոլիսկ

Ընկերությունն իր գործունեության ընթացքում հավաքագրում, պահպանում և օգտագործում է տվյալներ, որոնք կարող են պաշտպանված լինել «Անձնական տվյալների պաշտպանության մասին» և «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքներով:

Գործող գաղտնիության պահանջներին համապատասխան՝ Ընկերությունը ձեռնարկում է անհրաժեշտ տեխնիկական և կազմակերպչական միջոցներ՝ հաճախորդների տվյալներն ու այլ դասակարգված տեղեկատվությունը արտահոսքից և չարտոնված հասանելիությունից պաշտպանելու նպատակով: Տեղեկատվության տեղափոխումը համակարգից համակարգ կատարվում է բացառապես գաղտնագրված տարբերակներով:

Ընկերությունն աշխատում է երրորդ կողմի ծառայություններ մատուցողների հետ, ինչպիսիք են ծրագրային ապահովում իրականացնող որոշ ընկերություններ, որոնք կարող են լիովին չհամապատասխանել սահմանված պայմանագրային պայմաններին և իրենց պարտադրվող տվյալների պաշտպանության բոլոր պարտավորություններին: Այդ իսկ պատճառով, երկրորդ կողմին ծրագրային ապահովման սպասարկման նպատակով տրամադրվում է հասանելիություն միայն թեստային համակարգերին, որոնք չեն պարունակում անձնական տվյալներ հանդիսացող տեղեկատվություն կամ պարունակվող տեղեկատվությունը ապաստանված է:

Ընկերությունը «Անճնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի հիման վրա մշակել է «Անճնական տվյալների մշակման ծանուցում/անճնական տվյալների պաշտպանության քաղաքականությունը» փաստաթուղթը:

### 17. Դատական գործընթացներ

Ընկերությունը ներգրավված է մի քանի դատական վարույթներում, և վերջիններիս մասով Ընկերության համար անբարենպաստ դատական ակտերի կայացումը և ուժի մեջ մտնելը կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ցուցանիշների և գործունեության վրա:

Հարկ է նշել, որ կան դատական գործեր, որտեղ որպես պատասխանող և/կամ երրորդ անձ հանդես են գալիս Ընկերության բաժնետեր «Թիմ» ՓԲԸ-ն և Ընկերության իրական շահառուները (գործերից մեկում Ընկերությունը ներգրավված է որպես երրորդ անձ): Տվյալ գործերով որպես հայցվոր կողմ հանդես է գալիս «Յուքոմ» ՓԲԸ-ն, որը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ «Թիմ» ՓԲԸ կողմից «Վեոն Արմենիա» ՓԲ Ընկերության բաժնետոմսերի ձեռքբերման 2020 թվականի հոկտեմբերի 29-ի գործարքն անվավեր ճանաչելու և անվավերության հետևանքներ կիրառելու պահանջներով:

Ընկերությունը դատարանի կողմից «Յուքոմ» ՓԲԸ-ի վերոնշյալ պահանջի բավարարման հավանականությունը համարում է խիստ ցածր:

### 18. Գործող օրենքների հետ անհամապատասխանության ռիսկ

Գործող օրենքներին, կանոնակարգերին կամ պետական մարմինների որոշումներին անհամապատասխանությունը, ինչպես նաև Ընկերության գործունեության նկատմամբ պետական կարգավորումների ավելացումը կարող են հանգեցնել լրացուցիչ ծախսերի:

Ընկերության գործունեությունը ենթակա է տարբեր պետական կառույցների կողմից կարգավորման կապված՝

(ա) տարատեսակ լիցենզիաների, թույլտվությունների ստացման ու երկարաձգման հետ,

(բ) հեռահաղորդակցության, տեսալսողական, բնապահպանական, առողջապահական և այլ ոլորտների հետ, ինչպես նաև

(գ) անվտանգության, աշխատանքի, շինարարության և քաղաքաշինության, անճնական տվյալների պաշտպանության և սպառողների պաշտպանության, էլեկտրոնային հաղորդակցության, տնտեսական մրցակցության պաշտպանության օրենքներին, կանոնակարգերին և չափորոշիչներին շարունակական համապատասխանության հետ: Ընկերությունը երբեմն կարող է չհամաձայնվել կարգավորող մարմինների կողմից իրավական դրույթների մեկնաբանման կամ կիրառման հետ և կարող է ժամանակ առ ժամանակ վիճարկել իր գործունեության ընթացքը կարգավորող որոշումները:

### 19. Հարկային օրենսդրության փոփոխությունների ռիսկ

Հարկային օրենսգրքի, հարկային մարմինների որոշումների կամ մեկնաբանությունների փոփոխությունները կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործառնական արդյունքների և դրամական հոսքերի վրա:

### 20. Տարածաշրջանի ռազմական կոնֆլիկտների ռիսկ

Ընկերության գործունեության տարածաշրջանում առկա և հնարավոր ռազմական հակամարտությունները կարող են ունենալ հետևանքներ, որոնք կազդեն Ընկերության գործունեության վրա:

Մասնավորապես, ՀՀ և հարևան երկրների միջև հնարավոր ռազմական բախումները, պատերազմները կարող են բացասաբար անդրադառնալ ՀՀ տնտեսական ակտիվության և շուկայական իրավիճակի (կոնյունկտուրայի) վրա:

### 21. Զարգացող երկրներին վերաբերող ռիսկեր

ՀՀ-ն հանդիսանում է զարգացող շուկա (emerging market), որտեղ կարող են տեղի ունենալ կտրուկ կամ չնախատեսված տնտեսական կամ քաղաքական փոփոխություններ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության, գործառնական արդյունքների և ֆինանսական վիճակի վրա:

ՀՀ-ն վերջին տարիներին ենթարկվել է էական քաղաքական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների, որոնք իրենց ազդեցությունն են թողել տնտեսության վրա:

Երկրում քաղաքական կամ կառավարական անկայունությունը, ինչպես նաև բարեփոխումներին ուղղված քաղաքականությունների իրականացման տապալումը կարող են բացասական ազդեցություն ունենալ Ընկերության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ կապված ներդրումային գործիքների՝ մասնավորապես բաժնետոմսերի վրա:

Շուկաների ապագա տնտեսական ուղղվածությունը մեծապես կախված է պետական մարմինների կողմից ձեռնարկված տնտեսական, ֆինանսական և դրամավարկային միջոցառումների արդյունավետությունից, ինչպես նաև հարկային, իրավական և քաղաքական զարգացումներից:

**22. Երկրի վարկանիշի ռիսկ**

Միջազգային վարկանիշային գործակալության կողմից ՀՀ վարկանիշի իջեցումը կարող է բացասաբար ազդել Ընկերության գործունեության վրա, քանի որ կարող է սահմանափակել հավելյալ ֆինանսական միջոցների ներգրավումը, ինչպես նաև ազդել տոկոսադրույքների և վարկային միջոցների այլ առևտրային պայմանների վրա: Արդյունքում դա կարող է սահմանափակել Ընկերության կապիտալ ծախսերի ֆինանսավորման և/կամ պարտքային միջոցների վերաֆինանսավորման համար միջոցների ներգրավման հնարավորությունները:

**23. Միջազգային պատժամիջոցների և մատակարարման**

**շղթայի խափանման ռիսկ**

Ընկերության գործունեությունը սերտորեն կապված է միջազգային գործընկերների, մատակարարների և մեծածախ ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակի համատեքստում առկա է ռիսկ, որ Ընկերության որևէ գործընկեր, մատակարար կամ տարանցիկ կապուղի տրամադրող կողմ կարող է հայտնվել ԱՄՆ-ի (OFAC), ԵՄ-ի կամ Միացյալ Թագավորության (OFSI) պատժամիջոցների ցուցակներում:

- **Երկրորդային պատժամիջոցներ.** Նույնիսկ եթե Ընկերությունն ուղղակիորեն չի խախտում գործող սահմանափակումները, պատժամիջոցների տակ գտնվող անձանց կամ կազմակերպությունների հետ գործարքները (օրինակ՝ ռոումինգի փոխհաշվարկներ, միջազգային ինտերնետ կապուղիների վճարումներ) կարող են հանգեցնել Ընկերության նկատմամբ երկրորդային պատժամիջոցների (**secondary sanctions**) կիրառմանը:
- **Կրիտիկական ենթակառուցվածքների կաթված.** պատժամիջոցների կիրառումը առանցքային տեխնոլոգիական մատակարարների նկատմամբ կարող է անհնարին դարձնել ցանցի արդիականացումը, ծրագրային ապահովման լիցենզավորումը և անհրաժեշտ տեխնիկական աջակցության ստացումը:

# 03 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անկախ աուդիտորական եզրակացությամբ «Տելեկոմ Արմենիա» ԲԲԸ-ի 2025 թ. ֆինանսական հաշվետվությունը հասանելի է Ընկերության կայքում հետևյալ [հղումով](#):

## 3.1 Արտաքին աուդիտն իրականացնող անձանց անունը և վարձատրությունը, ինչպես նաև նրանց անկախության փաստի ստուգման արդյունքները

Արտաքին աուդիտն իրականացվել է «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ Իրավաբանական հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010 Վազգեն Սարգսյանի փ. 26/1, 8-րդ հարկ, Հեռախոսահամար՝ +374-10-595999 Վեբ կայք՝ <http://www.kpmg.am/> Տնօրեն՝ Իրինա Գևորգյան Ծառայությունների արժեքը կազմում է 57,600,000 ՀՀ դրամ, որը ներառում է ԱԱՀ:

## 3.2 Շահույթի տեղաբաշխման և բաշխման, այդ թվում շահութաբաժինների վճարման առաջարկությունները

1. Ընկերությունը կարող է որոշում կայացնել (հայտարարել) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան շահութաբաժինների վճարման մասին:
2. Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշում ընդունելու համար անհրաժեշտ է Ընկերության Խորհրդի առաջարկությունը, որը պարունակում է շահութաբաժինների չափերի և դրանց վճարման կարգի մասին տեղեկատվություն:
3. Շահութաբաժինները վճարվում են Ընկերության գուտ շահույթից (կուտակված շահույթից):

4. Ըստ բաժնետոմսերի տարբեր տեսակների և դասերի՝ միջանկյալ (եռամսյակային և կիսամյակային) շահութաբաժինների վճարման մասին որոշումը, շահութաբաժնի չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Խորհուրդը: Ըստ բաժնետոմսերի տեսակների և դասերի՝ տարեկան շահութաբաժինների վճարման, շահութաբաժնի վճարման չափի և դրա վճարման ձևի մասին որոշումն ընդունում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը՝ Տնօրենների Խորհրդի առաջարկությամբ:
5. Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող պակաս լինել արդեն վճարված միջանկյալ շահութաբաժիններից:
6. Միջանկյալ շահութաբաժինների չափը չի կարող գերազանցել նախորդ ֆինանսական տարվա արդյունքներով բաշխված շահութաբաժնի 50 տոկոսը: Տարեկան շահութաբաժինների չափը չի կարող ավելի լինել Խորհրդի առաջարկածից և պակաս լինել՝ արդեն վճարված միջանկյալ շահութաբաժինների չափից:
7. Տեղաբաշխված յուրաքանչյուր տեսակի (դասի) բաժնետոմսի համար Ընկերությունը հայտարարված շահութաբաժինները կարող է վճարել դրամով կամ այլ գույքով:
8. Ընկերության բաժնետերերին շահութաբաժինները դրամով վճարելու դեպքում վճարվում են անկանխիկ ձևով՝ գումարները նրանց բանկային հաշիվներին փոխանցելու միջոցով:
9. Համաձայն ՀՀ գործող օրենսդրության՝ Ընկերությունը հանդիսանում է հարկային գործակալ՝ բաժնետերերին իրենց բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելիս:
10. Բաժնետերերին շահութաբաժինները վճարվում են՝ դրանցից ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված հարկերը նվազեցնելուց հետո:
11. Բաժնետերերի ընդհանուր ժողովն իրավունք չունի որոշում կայացնել շահութաբաժինների վճարման վերաբերյալ, եթե՝
  - 11.1 լրիվ չի վճարվել Ընկերության Կոնոնսադրական կապիտալը,
  - 11.2 շահութաբաժիններ վճարելու որոշումն ընդունելու պահի դրությամբ Ընկերության վիճակը համապատասխանում է օրենքով սահմանված անվճարունակության (սնանկության) հայտանիշներին, կամ դրանք ի հայտ կգան շահութաբաժինների վճարման հետևանքով.
  - 11.3 Ընկերության գուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից կամ կպակասի շահութաբաժինների վճարման հետևանքով,
  - 11.4 Ընկերությունը հետ չի գնել բոլոր բաժնետոմսերը՝ Օրենքի 58-րդ հոդվածի դրույթներին համապատասխան.
12. Ընկերության Շահութաբաժնային քաղաքականությունը հրապարակված է [Շահութաբաժնային քաղաքականություն.pdf \(telecomarmenia.am\)](#)

# 04 ՀԱՎԵԼՎԱԾ

## 4.1 ԿԿ կորպորատիվ կառավարման տարեկան Հայտարարագիր

**Գլուխ I. Մասնակիցների հիմնական իրավունքներ, հավասար վերաբերմունք մասնակիցների նկատմամբ և նշանակալից մասնակիցների պարտականություններ**

### ՍԿԶԲՈՒՆՔ I.1. Կազմակերպության կառավարմանը մասնակցելու բաժնետիրոջ իրավունքը

Կազմակերպությունը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից կազմակերպության կառավարմանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
1.1.1.	Մասնակիցն ընդհանուր ժողովի գումարման օրվանից առնվազն 21 օր առաջ պատշաճ ծանուցվում է ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն է ունենում ծանոթանալ ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:	Համապատասխանում է	-
1.1.2.	Ընդհանուր ժողովի իրավիրման վայրն ու օրը (ժամը) չեն սահմանափակում ընդհանուր ժողովին մասնակցի մասնակցությունը:	Համապատասխանում է	-
1.1.3.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ու ընթացակարգերը հավասար վերաբերմունք են ապահովում միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Համապատասխանում է	-
1.1.4.	Ընդհանուր ժողովի վարման կանոններն ապահովում են ընդհանուր ժողովում ձայների պատշաճ հաշվարկն ու հաշվառումը, ինչպես նաև քվեարկության արդյունքների ժամանակին հրապարակումը:	Համապատասխանում է	-
1.1.5.	Ընդհանուր ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	Ընկերությունը ուղղորդվել է բաժնետերերի իրավունքների իրացման կապակցում և արդյունավետ մոդել ընդհանուր ժողովների վարման կանոնները հիմնված են բացառապես օրենսդրական և կանոնադրական պահանջների վրա, ինչն ապահովում է գործընթացի առավելագույն կանխատեսելիություն Կորպորատիվ կառավարման կանոնադրին միասնալուց հետո Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները գումարվել են հետևյալ կարգով: Հեռակա կարգով ժողովների անցկացումը թույլ է տալիս բաժնետերերին մասնակցել որոշումների կայացմանը՝ նստորեն հետևելով օրենքով սահմանված ժամկետներին և ընթացակարգերին՝ առանց ծանրաբեռնելու Ընկերության կորպորատիվ կառավարման համակարգը նույնարժեքակալ հավելյալ ընթացակարգերով ժողովի վարման կարգի վերաբերյալ լրացուցիչ ներքին կանոնակարգերի մշակման անհրաժեշտությունը ներկա փուլում բացակայում է:

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
1.1.6.	Ընդհանուր ժողովի վարման կանոնները և ընթացակարգերը հրապարակվում են կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	-
1.1.7.	Ընդհանուր ժողովում մասնակիցը հնարավորություն ունի հարցեր տալ և որոշադիր մարմնի անդամներին, աուդիտորին և ստասալ պատասխան:	Համապատասխանում է	«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) և Ընկերության կանոնադրության համաձայն, և հետևյալ կարգով անցկացվող ժողովների առանձնահատկությունից ելնելով՝ Ընկերությունն ապահովում է բաժնետերերի՝ հարցեր տալու, իրավունքի իրացումը՝ նախապես տրամադրվող 30-օրյա ժամանակահատվածում (ժողովի մասին ծանուցումից և քվեաթերթիկների տրամադրումից մինչև քվեաթերթիկների ընդունման վերջնաժամկետը): Բաժնետերերի բոլոր հարցումները (հեռախոսային կապի, նամակի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով) կենտրոնացվում են Կորպորատիվ քարտուղարի/գործադիր մարմնի մոտ, որոնք կազմակերպում են Տնօրենների կոմիտեի և Աուդիտորի հետ հետադարձ կապը և սպառիչ պարզաբանումների տրամադրումը՝ նախքան քվեաթերթիկների ընդունման վերջնաժամկետը:
1.1.8.	Ընդհանուր ժողովի ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեն հարցորդացվելու միմյանց հետ՝ քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:	Չի համապատասխանում	Հաշվի առնելով Ընկերության կողմից կիրառվող ընդհանուր ժողովների հետևյալ գումարման արակտիկան՝ մասնակիցների միջև անմիջական (ֆիզիկական) հաղորդակցությունը փոխարինվել է տեղեկատվության տրամադրման քաղախանիքի ընթացակարգով: Ընդհանուր ժողովի հետևյալ անցկացման ձևաչափը նպատակ ունի ապահովել բոլոր բաժնետերերի հավասար մասնակցությունը՝ անհան նրանց գտնվելու վայրից: Թեև այս ձևաչափը չի նախատեսում մասնակիցների միջև համաժամանակյա քննարկում, հարցերի ելությունը պարզաբանելու իրավունքն իրացվում է Ընկերության կողմից տրամադրվող նախնական նյութերի և պարզաբանումների միջոցով:
1.1.9.	Կազմակերպությունը հավասարակշռում է համատեղ ներկայությամբ և հեռավար ընդհանուր ժողովների գումարումը:	Չի համապատասխանում	Ընկերության համոզմամբ՝ հեռակա կարգով քվեարկությունը որոշ չափով նվազեցնում է ժողովի որևէ մասնակցի կողմից մյուսների որոշման վրա հնարավոր սուբյեկտիվ ազդեցությունը՝ խթանելով բաժնետերերի կողմից ինքնուրույն և օբյեկտիվ քվեարկությունը: Թեև Ընկերության ներկա քաղաքականությունը նախապատվությունը տալիս է հեռակա կարգով ժողովների գումարմանը՝ որպես առավել ճկուն և հասանելի մեխանիզմ, չի բացառվում ապագայում համատեղ ներկայությամբ ժողովների անցկացումը, եթե օրակարգային հարցերի բնույթը կամ բաժնետերերի կազմի փոփոխությունը պահանջի նման ձևաչափի կիրառում: Այս պահին հեռավար մոդելը լիովին բավարարում է Ընկերության կայուն կառավարման պահանջները:

### ՍԿՋՔՈՒՆՔ 1.2. Կազմակերպության Խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման մասնակցի իրավունքը

Կազմակերպության կորպորատիվ կառավարման համակարգը պետք է խթանի մասնակցի արդյունավետ մասնակցությունը Խորհրդի անդամների թեկնածուների առաջադրման և Խորհրդի անդամների ընտրության գործընթացին:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա իրավիճակ	Բացատրություն
1.2.1.	Մասնակիցը ողջամիտ ժամկետներում ամբողջական և բավարար տեղեկատվություն է ստանում Խորհրդի անդամների թեկնածուների մասնագիտական որակավորման և փորձառության, անցյալում և ներկայում գրադեցրած պաշտոնների, կազմակերպության և դրա հետ փոխկապակցված անձի (անձանց) Նշանակալից մասնակից լինելու մասին:	Համապատասխանում է	-

### ՍԿՋՔՈՒՆՔ 1.3. Կազմակերպության Խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականությունը

Մասնակիցը պետք է հնարավորություն ունենա կարծիք հայտնելու Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության վերաբերյալ, այդ թվում՝ ընդհանուր ժողովում քվեարկության միջոցով:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
1.3.1.	Կազմակերպությունն ունի Խորհրդի և գործադիր մարմնի անդամների վարձատրության քաղաքականություն և ընթացակարգեր:	Չի համապատասխանում	Հաշվետու տարվա ընթացքում ընկերությունում չի գործել մեկ միասնական, գրավոր ձևակերպված «Վարձատրության քաղաքականություն» անվանմամբ առանձին ներքին իրավական ակտ Սյրիուհանդերձ, որպես խոշոր կազմակերպություն ընկերությունը արակտիկայում կիրառում է ղեկավար մարմինների վարձատրության սահմանման հստակ և շուկայական տրամաբանության վրա հիմնված չափանիշներ Սյրի չափանիշներն ու պայմաններն իրենց արտացոլում են գտնում ղեկավար անձանց հետ կնքվող անհատական պայմանագրերում և իրավասու մարմինների առանձին որոշումներում ընկերությունը նախատեսում է կորպորատիվ կառավարման կատարելագործման հաջող փուլերում արդեն իսկ գոյություն ունեցող չփաստաթղթավորված արանտիկան և կրիտերիաները համակարգել և ամրագրել որպես միասնական, պաշտոնական ներքին քաղաքականություն:
1.3.2.	Խորհրդի և գործադիր մարմնի վարձատրության քաղաքականությունը, վարձատրության սխեմաները և դրանց փոփոխությունները Խորհրդի առաջարկով հաստատվում են ընդհանուր ժողովի կողմից, եթե գործադիր մարմնի մասով այդ իրավասությունը վերապահված չէ Խորհրդին:	Չի համապատասխանում	Տե՛ս նախորդ բացատրությունը:

### ՍԿՋՔՈՒՆՔ 1.4. Շահաբաժին ստանալու մասնակցի իրավունքը

Կազմակերպությունը միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի համար պետք է ապահովի հավասար և արդար վերաբերմունք մասնակցելու կազմակերպության շահույթի բաշխմանը շահաբաժին ստանալու միջոցով:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա իրավիճակ	Բացատրություն
1.4.1.	Խորհուրդը մշակել և հաստատել է շահաբաժինների վճարման քաղաքականությունը, որը ներառում է վճարվելիք շահաբաժնի նվազագույն գործակիցը:	Համապատասխանում է	-
1.4.2.	Շահաբաժինների վճարման ընթացակարգերն ապահովում են հավասար վերաբերմունք միևնույն տեսակի (դասի) բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ:	Համապատասխանում է	-

### ՍԿՋՔՈՒՆՔ 1.5. Նշանակալից մասնակցի պարտականությունները

Կազմակերպությունն ի շահ նշանակալից մասնակիցների կամ անմիջականորեն նշանակալից մասնակիցների կողմից կատարվող չարաշահումներից պետք է պաշտպանի փոքր բաժնեմասնակցություն ունեցող մասնակիցներին:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
1.5.1.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է կազմակերպության հետ կնքվող գործառնություն կամ կազմակերպության վրա ուղղակիորեն ազդող հարցերում իր ուղղակի, անուղղակի կամ երրորդ անձանց անունից հանդես գալու իր հնարավոր էական շահը և չի մասնակցում տվյալ գործարքի կամ հարցի հետ կապված որոշման ընդունմանը:	Համապատասխանում է	-
1.5.2.	Կազմակերպության նշանակալից մասնակիցը բացահայտում է Խորհրդի և գործադիր մարմնի անդամների հետ իր ունեցած փոխկապակցվածությունը:	Համապատասխանում է	-

## Գլուխ II. Խորհուրդ

### ՍԿՋՔՈՒՆՔ II.1. Խորհրդի առանցքային գործառույթները

Կազմակերպությունը պետք է առաջնորդվի արդյունավետ և կառուցողական Խորհրդի կողմից, որի դերն է նպաստել կազմակերպության երկարաժամկետ հաջողությանը, մասնակիցների համար արժեքի ստեղծմանը և կազմակերպության շահակիցներին աջակցմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
II.1.1.	Խորհուրդն իրականացնում է Կանոնագրով իրեն վերապահված գործառույթները:	Համապատասխանում է	-

**ՍԿՋԲՈՒՆՔ II.2. Խորհրդի կազմը**

Խորհրդի անդամները պետք է ունենան միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:

Խորհրդի գործունեության արդյունավետության և որոշումների օբյեկտիվության ու հավասարակշռվածության ապահովման նպատակով կազմակերպությունը պետք է ապահովի Խորհրդի կազմի բազմազանությունը:

Հայտարարագրում

Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.2.1.	Խորհուրդը սահմանել է կազմակերպության բազմազանության քաղաքականությունը՝ նախատեսելով բազմազանության չափանիշներ և թիրախներ:	Չի համապատասխանում
II.2.2.	Խորհրդի անդամներն ունեն միմյանց լրացնող մասնագիտական տարատեսակ ունակություններ, կրթություն և փորձառություն:	Համապատասխանում է

Ընկերության Խորհրդի կազմը ձևավորելիս սեռային հիմքով տարբերակում չի դրվում: Անդամների ընտրության միակ և առաջնահերթ պայմանը անդամների մասնագիտական փորձառությունն է: մասնավորապես՝ հեռահաղորդակցության և հարակից տեխնոլոգիական ոլորտներում խորքային գիտելիքների ու երկարամյա կառավարչական փորձի առկայությանը: Այդ պատճառով ներկայումս բազմազանության չափանիշների և քանակական թիրախների վերաբերյալ առանձին քաղաքականություն սահմանված չէ: Մինչև 2025 թ. Ընկերությունը կարևորում է բազմակողմ փորձառությունների, տարբեր մասնագիտական մոտեցումների և արդյունավետ կառավարման հավասարակշռված համադրությունը Խորհրդի գործունեության շրջանակում:

**ՍԿՋԲՈՒՆՔ II.3. Խորհրդի ոչ գործադիր անդամները**

Խորհրդի ոչ գործադիր անդամները պետք է իրենց կառուցողական վարքագծով խնդիրներ առաջադրեն գործադիր մարմնին, ուղղորդեն կազմակերպության ռազմավարական զարգացումը, գործադիր մարմնին առաջարկեն իրենց խորհրդատվական աջակցությունը:

Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.3.1.	Խորհրդի ոչ գործադիր անդամները Խորհրդում մեծամասնություն են կազմում:	Համապատասխանում է
II.3.2.	Խորհրդի ոչ գործադիր անդամները Խորհուրդ են բերում նոր փորձառություն, հատկապես՝ կազմակերպության մարտահրավերներն ընկալելու, ռազմավարական զարգացմանն աջակցելու, գործադիր մարմնին վերահսկելու և կատարողականը գնահատելու, տեղեկատվության արժանահավատության, ներքին հսկողության համակարգի, դիսկրիկ կառավարման հուսալիության, ֆինանսական և ոչ ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության, Խորհրդի և գործադիր մարմնի սերտագործակցության (իրավահարաբարության) պահպանման, գնահատման ու վարձատրության քաղաքականությունների և համակարգերի ձևավորման հարցերում:	Համապատասխանում է մասամբ

Խորհրդի ոչ գործադիր անդամներն իրականացնում են ռազմավարական զարգացմանն աջակցության, դիսկրիկ կառավարման և վերահսկողական գործառնություն, սակայն սերտագործակցության (իրավահարաբարության) պահպանման, ինչպես նաև գնահատման և վարձատրության միասնական քաղաքականությունները դեռևս փաստաթղթավորված և հաստատված չեն ընկերությունում

**ՍԿՋԲՈՒՆՔ II.4. Խորհրդի անկախ անդամները**

Խորհուրդը պետք է դիտարկի բավարար թվով Խորհրդի անկախ անդամների առաջադրման հարցը, որոնք ունակ են կատարել անկախ դատողություններ:

Հայտարարագրում

Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
I.4.1.	Կազմակերպության Խորհրդի անդամների 1/3-ն անկախ անդամներ են:	Համապատասխանում է
I.4.2.	Խորհուրդը տարեկան կտրվածքով իրականացնում է անկախ անդամների անկախության չափանիշների համապատասխանության վերլուծություն:	Համապատասխանում է
I.4.3.	Խորհրդի անդամի անկախության ապահովմանը միտված սահմանափակումները գործում են Խորհրդի անդամի պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:	Համապատասխանում է

**ՍԿՋԲՈՒՆՔ II.5. Խորհրդի նախագահը**

Խորհուրդը ղեկավարում է նախագահը, որը պատասխանատու է Խորհրդի արդյունավետ գործունեության համար: Նախագահը պետք է ունենա անկախ և անաչառ դատողություն, խթանի Խորհրդի և կազմակերպության գործունեության թափանցիկությունն ու Խորհրդում քաջալերի բանավեճի մշակույթը:

Նախագահը պետք է նպաստի Խորհրդի գործադիր և ոչ գործադիր անդամների միջև կառուցողական հարաբերությունների ձևավորմանը և ապահովի, որ Խորհրդի ոչ գործադիր անդամները տեղեկացված որոշումներ կայացնելու համար ժամանակին ստանան ճշգրիտ ու էական տեղեկատվություն:

	Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.5.1.	Խորհրդի նախագահն ապահովում է Խորհրդի ղեկավարումը և իրականացնում է Կանոնադրով իրեն վերապահված գործառնությունները:	Համապատասխանում է	-
II.5.2.	Խորհրդի նախագահը Խորհրդի ոչ գործադիր անդամ է:	Համապատասխանում է	-

**II.6. Խորհրդի հանձնաժողովները**

Իր գործունեությանն աջակցելու համար Խորհուրդը ձևավորում է մասնագիտացված հանձնաժողովներ:

	Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.6.1.	Խորհրդին կից ձևավորվել է աուդիտի հանձնաժողով:	Համապատասխանում է	-
II.6.2.	Աուդիտի հանձնաժողովն ունի վերահսկողական և խորհրդատվական դեր:	Համապատասխանում է	-
II.6.3.	Մեկ կամ ավելի հանձնաժողովի ձևավորման հանգամանքից՝ Խորհուրդն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում իր որոշումների համար:	Համապատասխանում է	-
II.6.4.	Խորհուրդը հաստատել է աուդիտի հանձնաժողովի առաքելությունը, կազմը, գործունեության շրջանակներն ու ընթացակարգերը:	Համապատասխանում է մասամբ	Աուդիտի հանձնաժողովի կազմը հաստատված է և համապատասխանում է սահմանված չափանիշներին: Ինչ վերաբերում է առաքելությանը և ընթացակարգերին, դրանք ներկայումս իրականացվում են ԸՆկերության կանոնադրության և Տնօրենների Խորհրդի գործունեության կանոնակարգի ընդհանուր դրույթների համաձայն, իսկ դրանք մասնաձևի ներքին իրավական ակտը ԸՆկերությունում դեռևս առկա չէ:
II.6.5.	Աուդիտի հանձնաժողովը հաշվետու է Խորհրդին և Խորհրդի կողմից սահմանված ձևաչափով ու պարբերականությամբ հաշվետվություններ է ներկայացնում Խորհրդին:	Համապատասխանում է	-
II.6.6.	Իր պարտականությունները կատարելու համար աուդիտի հանձնաժողովն ապահովված է անհրաժեշտ ռեսուրսներով:	Համապատասխանում է	-
II.6.7.	Աուդիտի հանձնաժողովը կազմված է բացառապես Խորհրդի ոչ գործադիր անդամներից	Համապատասխանում է	-
II.6.8.	Աուդիտի հանձնաժողովի անդամներից առնվազն մեկը Խորհրդի անկախ անդամ է:	Համապատասխանում է	-
II.6.9.	Աուդիտի հանձնաժողովի նախագահը Խորհրդի անկախ անդամ է:	Համապատասխանում է	-
II.6.10.	Աուդիտի հանձնաժողովի նախագահն ընտրվել է Խորհրդի կողմից:	Համապատասխանում է	-
II.6.11.	Խորհրդի նախագահի և աուդիտի հանձնաժողովի նախագահի պաշտոնները չեն համատեղվում:	Համապատասխանում է	-
II.6.12.	Աուդիտի հանձնաժողովի անդամներն ունեն կազմակերպության գործունեության ոլորտին առնչվող գիտելիքներ, իսկ առնվազն մեկը՝ համապատասխան ֆինանսական գիտելիքներ ու փորձառություն:	Համապատասխանում է	-
II.6.13.	Աուդիտի հանձնաժողովն իրականացնում է Կանոնադրով նախատեսված գործառնությունները:	Համապատասխանում է	-

**II.7. Խորհրդի անդամների պարտականությունները**

Խորհրդի անդամները պետք է գործեն լիարժեք տեղեկացված, բարեխղճորեն, պատշաճ ջանասիրությամբ և ողջամտորեն՝ ելնելով կազմակերպության ու մասնակիցների լավագույն շահերից և հաշվի առնելով կազմակերպության շահակիցների շահերը:

	Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.7.1.	Խորհրդի անդամը գործում է զբեռնությամբ և կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված իր իրավասությունների շրջանակում:	Համապատասխանում է	-
II.7.2.	Խորհրդի անդամը որոշումներ կայացնելիս կիրառում է անկախ դատողություն:	Համապատասխանում է	-
II.7.3.	Խորհրդի անդամը բավարար ժամանակ և ջանքեր է գործադրում իր պարտականությունները պատշաճ կատարելու համար:	Համապատասխանում է	-
II.7.4.	Խորհրդի անդամը երրորդ անձանցից չի ընդունել այնպիսի օգուտներ, որոնք կարող են դիտարկվել որպես ոչ ողջամիտ և հանգեցնել կազմակերպության կամ դրա հետ փոխկապակցված անձանց հետ շահերի բախման:	Համապատասխանում է	-
II.7.5.	Խորհրդի անդամը հայտնում է կազմակերպության կողմից կնքվող գործարքում կամ ձեռք բերվող պայմանավորվածություններում անձնական ուղղակի կամ անուղղակի շահագրգռվածություն ունենալու վերաբերյալ և ներկա չի գտնվում գործարքը կնքելու մասին որոշման քննարկմանն ու քվեարկությանը:	Համապատասխանում է	-
II.7.6.	Խորհրդի անդամը բավարար ժամանակ և ջանքեր է գործադրում իր պարտականությունները պատշաճ կատարելու համար:	Համապատասխանում է	-
II.7.7.	Խորհրդի անդամն իր պարտականությունները կատարում է անձամբ:	Համապատասխանում է	-

**II.8. Խորհրդի էթիկական հանձնառությունը**

Խորհուրդը պետք է հետևի բարձր էթիկական չափորոշիչներին:

	Դրույթ	Հմայ կարգաավիճակ	Բացատրություն
II.8.1.	Խորհուրդն ունի կազմակերպության կորպորատիվ էթիկան կառավարելու և հակակոռուպցիոն համապատասխանությունն ապահովելու հստակ հանձնառություն:	Համապատասխանում է	-
II.8.2.	Խորհուրդը նախաձեռնել է կազմակերպությանը ներհատուկ կոռուպցիոն ռիսկերի գնահատումը:	Համապատասխանում է մասամբ	Ընկերության Տնօրենների Խորհրդի կողմից չի նախաձեռնվել կոռուպցիոն ռիսկերի՝ որպես առանձնացված, պարբերական և համապարփակ գործընթացի հատուկ թիրախային և փաստաթղթավորված գնահատում, ինչով էլ պայմանավորված է սույն կետին մասնակի համապատասխանությունը: Այդուհանդերձ, ԸՆկերությունում արդեն իսկ մշակված, ներդրված և գործնականում կիրառվում են հակակոռուպցիոն բնույթի մի շարք կանխարգելիչ ներքին ընթացակարգեր (մասնավորապես՝ շահերի բախման կանխարգելման, զեմների և մատակարարման շրջայի թափանցիկության ապահովման): Այս գործիքակազմն ապահովում է ԸՆկերության առօրյա բիզնես-գործընթացներում կոռուպցիոն ռիսկերի գնահատման բավարար մակարդակ:

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
1.8.3.	Խորհուրդը հաստատել է կազմակերպության կորպորատիվ վարքականոսները և ապահովել դրանց բացահայտումը կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	-
1.8.4.	Խորհուրդը հաստատել է կազմակերպության կորպորատիվ վարքականոսները և ապահովել դրանց բացահայտումը կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	-
1.8.5.	Խորհուրդը հետևում է, որ կազմակերպության աշխատակիցների համար կազմակերպվեն կորպորատիվ վարքականոսների ներածական ուսուցումներ:	Համապատասխանում է	-

### ՍԿՋԲՈՒՆՔ II.9. Տեղեկատվություն և մասնագիտական խորհրդատվություն ստանալու Խորհրդի անդամների իրավունքները

Իր պարտականությունները պատշաճ կատարելու համար Խորհրդի անդամը պետք է հասանելիություն ունենա և համոզված լինի, որ ստանում է արդիական, հավաստի և համապատասխան տեղեկատվություն: Անհրաժեշտության դեպքում նա պետք է հնարավորություն ունենա կազմակերպության միջոցների հաշվին ներգրավել արտաքին անկախ խորհրդատվություն:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
11.9.1	Խորհրդի անդամները պատշաճ ծանուցվում են նիստերի իրավիճակի վերաբերյալ, որչափով ժամկետներում ստանում են նիստի օրակարգում քննարկվելիք փաստաթղթերի ու տեղեկությունների:	Համապատասխանում է	-
11.9.2	Խորհրդի անդամները հասանելիություն ունեն կազմակերպության կորպորատիվ քարտուղարին:	Համապատասխանում է	-

### ՍԿՋԲՈՒՆՔ II.10. Խորհրդի գնահատումը

Խորհուրդը կանոնավոր հիմունքներով պետք է գնահատի իր կատարողականը և որոշի իր անդամների փորձառության ու կարողությունների համադրության պատշաճությունը:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
11.10.1.	Խորհուրդն ապահովում է իր ինքնագնահատումը՝ որպես մեկ ամբողջություն:	Համապատասխանում է մասամբ	Ընկերության Տնօրենների խորհրդի գործունեության գնահատումը չի իրականացվում հատուկ առանձնացված, ֆորմալիզացված ինքնագնահատման մեթոդաբանությամբ (օրինակ՝ հարցաշարերի միջոցով), ինչով էլ պայմանավորված է կետին մասնակի համապատասխանությունը: Ընկերության ֆինանսական ու ռազմավարական թիրախների ամփոփման, ինչպես նաև Խորհրդի հաշվետվությունը կազմելու փուլերում Խորհուրդը վերլուծում և արժևորում է իր կողմից կայացված առանցքային որոշումների անմիջական ազդեցությունը նվաճ գրուցանիշների ապահովման և ԸՆկերության կայուն զարգացման վրա: Ընկերությունում ներկայումս ներդրված է և հաջողությամբ գործում է կատարողական հիմնական ցուցանիշների գնահատման (KPI) արդյունավետ համակարգ, որը, սակայն, կիրառվում է առավելապես, անհատական արդյունավետությունը չափելու նպատակով: Այս համակարգը դեռևս ադապտացված չէ և չի կիրառվում Խորհրդի՝ որպես կոլեգիալ մարմնի համատեղ որոշումների կայացման գործընթացը գնահատելու համար:

### ՍԿՋԲՈՒՆՔ II.11. Խորհրդի անդամների շարունակական մասնագիտական զարգացումը և Խորհրդի նոր անդամների կողմնորոշումը

Խորհուրդը պետք է ապահովի իր գիտելիքների և գործունեության համապատասխանությունը կազմակերպության աճին և կառուցվածքի բարդացմանը:

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
11.11.1.	Խորհուրդն ապահովում է իր անդամների շարունակական մասնագիտական զարգացումը:	Համապատասխանում է	-

### ՍԿՋԲՈՒՆՔ II.12. Խորհրդի անդամների առաջադրումը

Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության գործընթացները պետք է լինեն թափանցիկ ու կանոնակարգված: Խորհրդի անդամների ընտրությունը պետք է հիմնվի օբյեկտիվ չափանիշների վրա:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
11.12.1.	Կազմակերպությունն ունի Խորհրդի անդամների առաջադրման և ընտրության փաստաթղթավորված ընթացակարգեր և ապահովում է դրանց բացահայտումը կազմակերպության համացանցային էջում:	Համապատասխանում է	-
11.12.2.	Խորհրդի կազմը պարբերաբար թարմացվում է՝ երաշխավորելու, որ Խորհրդի կարողությունները բավարար են գործարար մարտահրավերներին դիմակայելու: a	Չի համապատասխանում	Հաշվի առնելով ԸՆկերության զարգացման ներկա փուլը և իրականացվող երկարաժամկետ ծրագրերի շարունակականության ապահովման անհրաժեշտությունը՝ Խորհրդի կազմի թարմացում վերջին շրջանում չի իրականացվել: ԸՆկերությունը կարևորում է փորձառու անդամների կայունությունը: ԸՆկերությունը չունի Խորհրդի կազմի պարբերական վերանայմանն առնչվող հաստատված ընթացակարգեր: Խորհրդի կազմի փոփոխությունները տեղի են ունենում միայն անդամների սեփական նախաձեռնությամբ հետևանալու դեպքում, ինչպես նաև այն պայմաններում, երբ նրանց փորձառությունը կամ մասնագիտական հմտությունները այլևս չեն համապատասխանում ԸՆկերության զարգացման նոր փուլին կամ ռազմավարական առաջնահերթություններին:

### Գլուխ III. Ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգ

#### ՍԿՋԲՈՒՆՔ III.1. Ներքին հսկողություն

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին հսկողության արդյունավետ գործընթացներ ու ընթացակարգեր՝ կազմակերպության կողմից ֆինանսական, ոչ ֆինանսական և հաշվապահական տեղեկատվության ամբողջականությունն ապահովելու, հաշվետվողականությունը խթանելու և խարդախությունները կանխելու համար:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
III.1.1.	Կազմակերպության ներքին հսկողության շրջանակները սահմանված են (առկա են բյուջետավորման, ֆինանսական սահմանափակումների, կրկնակի ստուգումների գործող կառուցակարգեր, գործարար գործընթացների կառավարումը և հետազննությունն ապահովող ընթացակարգեր, հաշվետվողականության և հաղորդակցման կառուցակարգեր, հստակեցված է կառավարման մարմինների, ստորաբաժանումների իրավասությունների շրջանակը, աշխատակիցներն ընկալում են ռիսկերի, այդ թվում՝ համապատասխանության ռիսկի իրավատեր լինելը և այլն):	Համապատասխանում է	-
III.1.2.	Կազմակերպության գործադիր մարմինն ապահովում է ներքին հսկողության արդյունավետ համակարգի ձևավորումն ու պահպանումը խորհրդի կողմից սահմանված շրջանակներում:	Համապատասխանում է	-

#### ՍԿՋԲՈՒՆՔ III.2. Կազմակերպության ռիսկերի կառավարման գործառույթը

Կազմակերպությունը պետք է ունենա ռիսկերի կառավարման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս իրագործել ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ապահովում է կազմակերպության ռիսկերի մասին հաշվետվողականությունն ու հաղորդակցությունը և կազմակերպության կողմից իր ռազմավարական նպատակներին հասնելու վերաբերյալ ձևավորում ողջամիտ սպասումներ:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
III.2.1.	Կազմակերպությունում ձևավորվել է ռիսկերի կառավարման գործառույթ, որի նշանակումը, լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացնում է գործադիր մարմինը՝ խորհրդի համաձայնությամբ:	Համապատասխանում է	-

#### ՍԿՋԲՈՒՆՔ III.3. Կազմակերպության համապատասխանության ապահովումը

Կազմակերպությունը պետք է ունենա համապատասխանության ապահովման գործառույթ, որն արդյունավետորեն և ամբողջությամբ հնարավորություն է տալիս գնահատել կազմակերպության համապատասխանության ռիսկը և նպաստել կազմակերպության համապատասխանության ապահովմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
III.3.1.	Կազմակերպությունում ձևավորվել է համապատասխանության պատասխանատվի գործառույթ, որի նշանակումը, լիազորությունների դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացնում է գործադիր մարմինը՝ խորհրդի համաձայնությամբ:	Համապատասխանում է	-

#### ՍԿՋԲՈՒՆՔ III.4. Կազմակերպության ներքին աուդիտը

Կազմակերպությունը պետք է ունենա ներքին աուդիտոր/ներքին աուդիտի ստորաբաժանում, որն անկախ և օբյեկտիվ հավաստիացումներ ու խորհուրդներ է տրամադրում կազմակերպության խորհրդին և գործադիր մարմնին՝ կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման, կորպորատիվ կառավարման համակարգերի համարժեքության ու արդյունավետության վերաբերյալ և աջակցում կազմակերպության նպատակների իրագործմանն ու գործունեության բարելավմանը:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
III.4.1.	Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումն աշխատողները նշանակվում է/են խորհրդի կողմից: Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումը հաշվետու է խորհրդին, իսկ աուդիտի հանձնաժողովի առկայության դեպքում՝ վերջինիս:	Համապատասխանում է մասամբ	-
III.4.2.	Խորհուրդը/աուդիտի հանձնաժողովը հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:	Համապատասխանում է	-
III.4.3.	Ներքին աուդիտի/ներքին աուդիտի ստորաբաժանումն աշխատակիցների պլանավորումը կատարվում է ռիսկերի գնահատման հիման վրա:	Համապատասխանում է մասամբ	Ռիսկերի գնահատումը իրականացվում է ՆԱ կողմից պլանավորված աուդիտի գործընթացին զուգահեռ, իսկ եթե կրկնվող է ապա նախկին փորձի վրա: ՆԱ-ն ռիսկերի կառավարման սկզբունքների համաձայն չի կիրառում գնահատման հատուկ գործիքներ, այլ առաջնորդվում է առաջնային փաստացի գործընթացի դիտարկման շրջանակներում risk-control գնահատմամբ, առաջնորդվելով ֆինանսական հողավածների գումարի մեծությունից: Եականություն, նույն ինքը ռիսկի ակտիվացումը այս պահին ներդրված չէ
III.4.4.	Ներքին աուդիտորը/ներքին աուդիտի ստորաբաժանումն աշխատողները կազմակերպության խորհրդի և գործադիր մարմնի անդամներ և վերջիններին հետ փոխկապակցված անձ/անձինք չէ/չեն:	Համապատասխանում է	-

**Գլուխ IV. Տեղեկատվության բացահայտում և թափանցիկություն**

**ՍԿՋԲՈՒՆՔ IV.1. Կազմակերպության տեղեկատվական քաղաքականությունը**

Կազմակերպությունը պետք է ապահովի իր թափանցիկությունը, այդ թվում՝ ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների, կայունության, սեփականության և կորպորատիվ կառավարման բոլոր էական հարցերի վերաբերյալ արդիական և արժանահավատ տեղեկատվության ժամանակին բացահայտումը:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
IV.1.1.	Կազմակերպությունն ունի տեղեկատվական քաղաքականություն, որն առնվազն նախատեսում է կազմակերպության կողմից տեղեկատվության բացահայտման նպատակները, սկզբունքները, ժամկետները, պարբերականությունը, կարգն ու հաղորդակցման ուղիները, բացահայտման ենթակա տեղեկատվության ցանկը (եթե այն գերազանցում է օրենսդրությամբ նախատեսվածը):	Համապատասխանում է	-
IV.1.2.	Տեղեկատվության տարածման եղանակները մասնակիցների և այլ շահակիցների համար ապահովում են համապատասխան տեղեկատվության հավասար, ժամանակին և տնտեսապես արդյունավետ հասանելիություն:	Համապատասխանում է	-
IV.1.3.	Տեղեկատվության պարբերական բացահայտումներն ուղեկցվում են կազմակերպության էական գարգացումների վերաբերյալ տեղեկատվության բացահայտմամբ:	Համապատասխանում է	-
IV.1.4.	Կազմակերպությունը երաշխավորում է ներքին (գաղտնի) տեղեկատվության պահպանումը և իր տեղեկատվական անվտանգությունը:	Համապատասխանում է	-

**ՍԿՋԲՈՒՆՔ IV.2. Կազմակերպության հաշվետվությունները**

Կազմակերպության կողմից էական հարցերի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումը պետք է ներառի, սակայն չսահմանափակվի տարեկան հաշվետվությունների հրապարակմամբ:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
IV.2.1.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է խորհրդի նախագահի և գործադիր մարմնի ղեկավարի ուղեորձերը:	Համապատասխանում է	-
IV.2.2.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է գործադիր մարմնի զեկույցը:	Համապատասխանում է	-
IV.2.3.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է ֆինանսական հաշվետվությունները և դրանց վերաբերյալ աուդիտորական կազմակերպության եզրակացությունը:	Համապատասխանում է	-

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
IV.2.4.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կազմակերպության նպատակները և կայունության հաշվետվությունը:	Համապատասխանում է	-
IV.2.5.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է փոխկապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը:	Համապատասխանում է	-
IV.2.6.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կորպորատիվ կառավարման զեկույցը:	Համապատասխանում է	-
IV.2.7.	Կազմակերպության տարեկան հաշվետվությունը ներառում է կորպորատիվ կառավարման տարեկան հայտարարագիրը:	Համապատասխանում է	-

**ՍԿՋԲՈՒՆՔ IV.3. Կազմակերպության արտաքին աուդիտորը**

Կազմակերպությունը պետք է ենթարկվի արտաքին աուդիտի՝ անկախ, կոմպետենտ և որակավորված աուդիտորական կազմակերպության կողմից՝ աուդիտի, էթիկայի և անկախության միջազգային չափորոշիչներին համապատասխան՝ խորհրդին ու մասնակիցներին ողջամիտ հավաստիացում տրամադրելու այն մասին, որ կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով, արժանահավատորեն արտացոլում են դրա ֆինանսական վիճակը, գործունեության ֆինանսական արդյունքները և պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների կիրառելի հիմունքներին համապատասխան:

Հայտարարագրում

	Դրույթ	Հնա կարգավիճակ	Բացատրություն
IV.3.1.	Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները ենթարկվում են արտաքին աուդիտի:	Համապատասխանում է	-
IV.3.2.	Կազմակերպությունն ունի արտաքին աուդիտորի/աուդիտորական կազմակերպության ընտրության չափանիշներ և կարգ:	Չի համապատասխանում	Հաշվետու տարվա ընթացքում ԸՆկերթությունում չի գործել արտաքին աուդիտորի ընտրության չափանիշները և կարգը սահմանող առանձնացված, միասնական գրավոր ներքին իրավական ակտ: Այդուհանդերձ, արտաքին աուդիտորի ընտրության գործընթացը ԸՆկերթությունում իրականացվում է «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի, ԸՆկերթության կանոնադրության և շուկայում ծանվորված լավագույն պրակտիկայի համաձայն: Թեև չափանիշները փաստաթղթավորված չեն մեկ առանձին կարգով, գործնականում ԸՆկերթության իրավասու մարմիններն առաջնորդվում են հստակ սկզբունքներով, հաշվի են առնվում աուդիտորական ընկերության միջազգային բարձր հեղինակությունը և փորձառությունը (մասնավորապես՝ հեռահաղորդակցության ոլորտում), անկախությունը ԸՆկերթության կառավարման մարմիններից, ինչպես նաև զնային առաջարկի արդյունավետությունը: Գործընթացի թափանցիկությունն ու չափերի բախման բացառումն ամբողջությամբ ապահովվում են նրանով, որ ԸՆկերթության աուդիտն իրականացնող անձի հաստատումը և նրան վճարվող վարձատրության չափի որոշումը հանդիսանում է բացառապես ԸՆկերթության ռազմավարական ղեկավարումն իրականացնող մարմնի՝ Տնօրենների խորհրդի իրավասությունը՝ բացառելով ընտրության ժամանակ միանձնյա որոշումներ կայացնելու հնարավորությունը:

IV.3.3.	Մուդիտորական կազմակերպության թեկնածությունն առաջադրում է Խորհուրդը, նշանակում է (հաստատում է) ընդհանուր ժողովը:	Համապատասխանում է	Ընկերության կանոնադրությամբ տվյալ իրավասությունը վերապահված է Խորհրդին:
IV.3.4.	Մրտաքին աուդիտորը հաշվետու է մասնակիցներին:	Համապատասխանում է	Մրտաքին աուդիտորը հաշվետու է նաև Խորհրդին:
IV.3.5.	Մուդիտորական կազմակերպությունը ստուգում է կազմակերպության ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգը:	Համապատասխանում է	-

## Գլուխ V. Կազմակերպության հարաբերությունները շահակիցների հետ

### ՍԿՋԲՈՒՆՔ V.1. Կազմակերպության շահակիցները կորպորատիվ կառավարման համակարգում

Կազմակերպությունը պետք է ճանաչի իր շահակիցների իրավունքները, դերերն ու շահերը և խրախուսի կազմակերպության, մասնակիցների ու շահակիցների միջև ակտիվ համագործակցությունը, որն ուղղված է արժեքի, այդ թվում՝ որակյալ աշխատատեղեր ստեղծելուն, ինչպես նաև կենսակայուն և դիմակայուն կազմակերպություն ձևավորելուն:

Հայտարարագրում

	Դրույթ	Հմայ կարգավիճակ	Բացատրություն
V.1.1.	Կազմակերպությունն ունի շահակիցների հետ հաղորդակցման քաղաքականություն:	Համապատասխանում է մասամբ	Հաշվի առնելով «շահակից» հասկացության լայն ընդգրկվածությունը՝ Ընկերությունը չունի մեկ միասնական, համապարփակ հաղորդակցման քաղաքականություն: Փոխարենը, կիրառվում է թիրախային մոտեցում. մշակվել և գործում են առանձնացված քաղաքականություններ և կանոնակարգեր՝ շահակիցների միայն հիմնական (առանցքային) խմբերի հետ հարաբերությունները կառավարելու նպատակով: